Հ-85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ ԺՈՐԱՅԻ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ / ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ /

Է. 00.01 Հայոց պատմություն մասնագիտությամբ
Պատմական գիտությունների դոկտորի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 1999

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ
Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

պատմական գիտությունների դոկտոր
Վ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ.
Վ. Գ. ԹՈՒՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Մաշտոցի անվան մատենադարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 28-ը դեկտեմբերի 1999թ. ժամը 12^{00} ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող 004 մասնագիտական խորհրդի նիստում /375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ/:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական կաբինետում:

Սեղմնագիրն առաքված է «27» նոյեմբերի 1999թ

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, պատմական
գիտությունների թեկնածու **ՄԵԼՔՈՆՅԱՆ Ա.Ա.**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ.

Հայոց պատմության բեկումնային ժամանակահատվածներում, երբ երկրի քաղաքական կողմնորոշման խնդիրը վճռորոշ նշանակություն է ստանում, առիթ է ստեղծվում կրկին գնահատել ու վերլուծել անցած ուղին, դասեր քաղել պատմությունից: Բնականաբար, վերջին դարերի պատմության դասերը հուշում են մեզ խորհել Հայաստանի և Ռուսաստանի, հայ և ռուս ժողովուրդների քաղաքական շահերի ու նպատակների ընդհանրության շուրջ:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացումով հայ ժողովրդի մի հատվածն ազատվեց իր հարևանների մեջ տարալուծվելու վտանգից, նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հայ ժողովրդի ազգահավաքման, տնտեսության ու մշակույթի զարգացման համար: Դա անժխտելի իրողություն է և արդեն պատմություն: Թեպետ ցարիզմը նվաճված ժողովուրդների նկատմամբ վարում էր գաղութային քաղաքականություն, այնուհանդերձ, Ռուսաստանի հետ միանալուց հետո Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքը զգալի աշխուժացում ապրեց: Հանգամանք, ինչը հնարավոր չէր Պարսկաստանի ու Թուրքիայի դարավոր բիրտ, ապա և վերջինիս կողմից հետագայում որդեգրած հայաջինջ քաղաքականության հետևանքով:

Ատենախոսության նպատակը չէ վերաշարադրել, կամ էլ վերարտադրել ռուս հեղինակների աշխատությունները: Դա անիմաստ աշխատանք կլիներ: Ուստի հիմնահարցը ներկայացվել է հետևյալ կերպ: Ռուս հեղինակների աշխատություններում տեղ գտած հայագիտական նյութերը քննարկվել են երկու գլխավոր տեսանկյունից. նախ՝ որքանով են այդ նյութերը լրացնում հայոց պատմությունը և հիմք տալիս հայոց պատմության առանձին հիմնահարցերի թարմ լուսաբանությանը, երկրորդ՝ որքանով են այդ նյութերը նպաստել հայ-ռուսական հարաբերությունների խորացմանը և թե ինչ աղերսներ ունեն արդի ժամանակաշրջանի հետ: Այս առումով, հիմնահարցի ուսումնասիրությունը այժմ էլ դեռ չի կորցրել քաղաքական իր հնչեղությունը:

Միաժամանակ, պատմագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես նախկինում, այնպես էլ այժմ, պատմությունը կրկին հայ ժողովրդի առջև դրել է նույն հիմնախնդիրները, թեպետ այդ ժամանակվանից անցել է գրեթե երկու դար: Իսկ անցյալի դասերը միշտ էլ ուսանելի են: Այսօր Հայաստանը և Ռուսաստանը ինքնիշխան պետություններ են: Սակայն դա ամենևին չի խանգարում շարունակելու և խորացնելու պատմության թելադրանքով ձևավորված երկու ժողովուրդների հարաբերությունները: 1997թ. Մոսկվայում կնքված համաձայնագիրն արձանագրում է հայ-ռուսական հարաբերությունների զարգացման նոր աստիճան և նոր որակ: Այն ընդգրկում է հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտները, ինչը հիմք է տալիս այդ հարաբերությունների հետագա խորացման համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ:

Հայագիտության զարգացումը Ռուսաստանում կարելի է բաժանել երեք

հիմնական փուլերի. 17-18-րդ դարերը հայագիտության սկզբնավորման ժամանակաշրջան էր: Այն մեզանում ուսումնասիրված է. նրան է նվիրված Ռ. Խաչատրյանի արժեքավոր աշխատությունը /Хачатрян Р.Г. Русская историческая мысль и Армения. Ереван, 1987/: Երկրորդ փուլն ընդգրկում է 19-րդ դարը: Երրորդ պատմափուլը 20-րդ դարն է: Այն հավանաբար հետազոտվելու է երեք ենթափուլերով՝ 20-րդ դարի նախախորհրդային տասնամյակները, խորհրդային շրջանը և հետխորհրդային ժամանակաշրջանը:

Ներկա ուսումնասիրության համար ժամանակագրական սահման է ընտրված 19-րդ դարը: Մի ժամանակաշրջան, երբ Ռուսաստանում ոչ միայն զարգացավ ռուս պատմագիտական միտքը և ստեղծվեց հայագիտական ուշագրավ գրականություն, այլև ընդլայնվեց պատմագիտական բուն հիմնահարցերով զբաղվողների շրջանակը, հարստացավ հետազոտությունների թեմատիկան: Մյուս կողմից, 19-րդ դարի բուռն իրադարձությունները, որոնք ընթանում էին կայսրությունում՝ կապված արտաքին և ներքին քաղաքական խնդիրների լուծման հետ, ռուս գիտնականներին ուղղակի մղում էին զբաղվելու Ռուսաստանին միացված մարզերի պատմության ուսումնասիրությամբ: Պատմական վավերագրերի կողքին, որոնք անմիջականորեն վերաբերում էին տարածաշրջանում Ռուսաստանի վարած քաղաքականությանը, գիտական շրջանակներն են թափանցում նաև նորանվաճ ժողովուրդների պատմությանը վերաբերող աղբյուրներ և թարգմանական գրականություն: Այլ խոսքով՝ ընդլայնվում է նաև այդ ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար անհրաժեշտ աղբյուրագիտական հենքը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ներկա ուսումնասիրության նպատակն է երկու ժողովուրդների գիտության մարզում ունեցած հարաբերությունների հետազոտումը: Հիմնահարց է ընտրված հայագիտության կարևոր ու տարողունակ ճյուղերից մեկը՝ պատմագիտությունը:

Քննարկելով 19-րդ դարի հայագիտությանը վերաբերող հարցերը, ավելի ամբողջական ու առարկայական է դառնում Ռուսաստանում նրա զարգացման միտումները, դրանով պայմանավորված նաև՝ հայ մշակույթի որոշակի առաջընթացը: Հայագիտական հարցերի քննարկումը որոշ առումով նաև քաղաքական միտումների լուսաբանում է, քաղաքական շահերի ու իրավիճակի բնորոշում: Այստեղից էլ ուսումնասիրության մյուս կարևոր նպատակը. մեկ անգամ ևս ընդգծելու հայ-ռուսական հարաբերությունների հետագա խորացման անհրաժեշտությունը, նրա անցած ուղու և դասերի արդիական նշանակությունը:

Խորհրդային միության փլուզմանը նախորդած տարիներին միության նախկին հանրապետություններում, այդ թվում և Հայաստանում, փորձեր եղան վերագնահատելու հայ-ռուսական հարաբերությունները: Այդ ընթացքում հանդիպեցին նաև ծայրահեղություններ, երբեմն էլ չափից ավելի զգացմունքային մոտեցումներ: Պատմաբանն իրավունք չունի ենթարկվելու քաղաքական մթնոլորտի տարուբերումներին: Նա պարտավոր է ներկայացնել գիտականորեն հիմնավորված իրողությունը, ճշմարտությունը: Արդարև, ճշմարտության միակ չափանիշը հայ-ռուսական հարաբերությունների իրական պատմությունն է և մեր ժամանակների խորհուրդը: Ի պատիվ հայ պատմաբանների, պետք է նշել, որ հրապարակ նետված քաղաքականամետ

այդ կարծիքներին նրանք տուրք չտվեցին: Մեր պատմագիտությունը համակողմանի ուսումնասիրում և նշանակալի ներդրում է կատարում հայ-ռուսական հարաբերությունները ճշմարտության դիրքերից լուսաբանելու խնդրում:

Խնդրո առարկա հարցի ուսումնասիրությանը ձեռնամուխ ենք եղել հայագիտության բնագավառում ռուս և հայ հեղինակների կողմից 19-րդ դարում ստեղծած մեծածավալ ու ուշագրավ գրականությունը քննությամբ հանրագումարի բերելու նպատակով: Ուսումնասիրության նպատակն է նաև համակողմանիորեն պատմաքննական վերլուծության ենթարկել 19-րդ դարի հայագիտությանը միտված ուսումնասիրությունները և դրանց հիման վրա կատարել համապատասխան ընդհանրացումներ, ջանացել ենք ներկայացնել հայոց պատմության հարցերի վերաբերյալ ռուս հեղինակների հաճախ իրարամերժ տեսակետներն ու մոտեցումները, ընդգծել ընդունելին: Համադրելով առանձին հեղինակների արտահայտած կարծիքներն ու հաղորդած փաստական տեղեկությունները, փորձ ենք արել նաև որոշակիություն մտցնել հայոց պատմության առանձին հարցերի ուսումնասիրության խնդրում: Միաժամանակ խնդիր ենք ունեցել .

- ցույց տալ հայագիտական հետազոտությունների հիմնական ուղղություններն ու միտումները:
- լուսաբանել այդ ուսումնասիրությունների ի հայտ գալու պատմական նախադրյալները:
- ներկայացնել և քննական վերլուծության ենթարկել ռուս և հայազգի այն հեղինակների աշխատությունները, որոնք բնորոշում են Ռուսաստանում հայագիտության ուսումնասիրության աստիճանը:

Խնդրո առարկա հարցի ուսումնասիրության ընթացքում մենք համոզվեցինք, որ բոլոր այս հարցերը հստակ հետազոտության և տեսական ընդհանրացումների ու հիմնավորումների կարիք ունեն: Ատենախոսության մեջ քննարկվող հարցերի կոնկրետ վերլուծության ընթացքում մենք ձգտել ենք ղեկավարվել պատմականության սկզբունքը պահպանելով:

Հայ ժողովրդի ճակատագրի, նրա ձգտումների ու ակնկալիքների, նրա անցած պատմական ուղու հանդեպ հետաքրքրությունը գնալով աճում էր ինչպես բուն Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Հետևաբար, հայոց պատմության ուսումնասիրումը որոշ իմաստով նպաստում էր նաև հայ ժողովրդի առջև ծառացած քաղաքական խնդիրներին:

ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՆՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել ռուս և հայ հեղինակների այն աշխատություններն ու հրապարակումները, որոնք անմիջականորեն վերաբերում են Հայաստանին ու հայոց պատմությանը: Այս իմաստով, ատենախոսությունում առավելապես քննության են առնվել ռուսերեն լեզվով լույս տեսած գրականությունը: Այդ ուսումնասիրությունները հարուստ և ուշագրավ նյութեր են պարունակում Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային պատմության վերաբերյալ: Արժեքավոր տեղեկություններ կան նաև հայկական գաղթավայրերի, արևմտահայության ծանր կացության և այլ հիմնահարցերի մասին: Այդ ուսումնասիրությունների

պատմագիտական կարևոր նշանակությունը կայանում է նրանում, որ դրանց գերակշիռ մասը շարադրված են արխիվային վավերագրերի հիման վրա, որոնք հայոց պատմության ուսումնասիրության խնդրում, անշուշտ, ձեռք են բերում աղբյուրագիտական նշանակություն:

Հայ-ռուսական հարաբերությունների պատմության, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման հիմնահարցերի ուսումնասիրությունը մշտապես գտնվել են խորհրդահայ պատմաբանների ուշադրության կենտրոնում: Հիմնահարցի ուսումնասիրության վերաբերյալ ստեղծված է պատկառելի գրականություն[1]: Այս առումով, անհրաժեշտ է արժանին մատուցել հայ պատմագիտությանը և ընդգծել այն իրողությունը, որ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը գիտական պատշաճ ուսումնասիրության արժանացավ հատկապես խորհրդահայ պատմագիտության կողմից: Հայ-ռուսական հարաբերությունների պատմության ուսումնասիրության խնդրում կարևոր արժեք են ներկայացնում նաև հայ գիտնականների կողմից ամենատարբեր բնույթի արխիվային փաստաթղթերի և նյութերի հրատարակումները[2]:

Բարձր գնահատելով հայ պատմաբանների կողմից կատարված աշխատանքը, որի արդյունքում ստեղծվեց հայ-ռուսական հարաբերությունների պատմության գիտական հարուստ գրականություն, այնուհանդերձ, պետք է նշել, որ այդ պատմությանը վերաբերվող ոչ բոլոր բնագավառներն են հավասարաչափ ուսումնասիրվել: Ասվածը հատկապես վերաբերում է հայագիտական հարցերի ուսումնասիրությանը: Ընդ որում, որպես կանոն, ռուս

---

[1] Տես՝ Иоаннисян А..Р. Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия.Ереван,1947, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия,Ереван,1958,Ներսիսյան Մ.Գ., Դեկաբրիստները Հայաստանում, Երևան,1978, Հայերի մասնակցությունը 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմին, Երևան, 1958, Պատմության կեղծարարները, Երևան, 1998,Գալոյան Գ.Ա. Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, Россия и народы Закавказья, М., 1976. Բարխուդարյան Վ.Բ. Ոսկանյան Վ., Հայ-ռուսական պատմական կապերը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1978, Բարխուդարյան Վ.Բ.Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1985, Միքայելյան Վ.Ա., Ղրիմի հայկական գաղութի պատմություն, գիրք 1-2, Երևան,1964, 1970,Ղրիմահայոց պատմություն, Երեվան, 1989, На Крымской земле, Ереван,1974, Агаян Ц.П. Роль России в исторических судьбах Армении, М., 1978, Гарибджанян Г.Б. Страницы истории Армянского народа Ереван,1998, Ананян Ж. А., Хачатурян В. А., Армянские общины России, Ереван, 1993, Պարսամյան Վ.Ա., Ա.Ս.Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Երևան, 1978 և ուրիշներ:

[2] Տես՝ Армяно-русские отношения в XVII в, сб., док., т.1, Ереван,1953, Армяно-русские отношения в XVIII, сб., док., т. II, ч.1-2, Ереван, 1964, 1967, Армяно-русские отношения в XVIII в. сб. док., т.3, Ереван, 1978, Присоединение Восточной Арме-нии к России, сб.док, т.1-2,Ереван,1972,1978, Из истории вековой дружбы, сб. Статей, Ереван, 1983.

պատմագիտական միտքը ներկայացվել ու քննարկվել է միևնույն ելակետերից և միայն ընդհանուր գծերով: Ավելին, նրանց միջև տարբերակում չի դրվել: Մեր պատմագիտությունը թերևս թերացել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման և առհասարակ հայ-ռուսական հարաբերությունների լուսաբանման ռուս պատմագիտական մտքի գնահատության հարցում: Մինչդեռ, թեպետ նրանց ուսումնասիրություններում առկա են մոտեցումների ու տեսակետների որոշ նմանություններ, այնուհանդերձ, նրանցից յուրաքանչյուրի գիտական ժառանգության մեջ կան բազում տարբերություններ: Այդ հանգամանքն ավելի որոշակի է դարձնում նրանց պատմագիտական ժառանգության նկատմամբ հետաքրքրությունը:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ յուրաքանչյուր ուսումնասիրություն ունի իր առանձնահատուկ դժվարությունները, առավել ևս եթե այն վերաբերում է պատմագիտական բնույթի հետազոտություններին: Այդ իմաստով, մեկ աշխատության սահմաններում հնարավոր չէ մանրամասն ու հանգամանորեն անդրադառնալ պատմագիտական այն հսկայական գրականությանը, որը ստեղծվել է Ռուսաստանում 19-րդ դարի ընթացքում: Բնականաբար, ուսումնասիրությունից կարող են դուրս մնացած լինել առանձին հրատարակություններ և հրապարակումներ. որոնք սփռված են ամենատարբեր հրատարակություններում և ռուսական մամուլի էջերում: **ՌԻՍՈՒՄՆԱՍԻԲՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Ատենախոսությունն առաջին փորձն է ներկայացնելու և ամբողջացնելու 19-րդ դարում Ռուսաստանում ստեղծված հայագիտական գրականությունը, նրա զարգացման միտումներն ու ուղղությունները: Չնայած ռուս հեղինակների առանձին աշխատությունների քննարկումը տեղ են գտել հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցերին նվիրված ուսումնասիրություններում, սակայն դրանք մեծ մասամբ համառոտ անդրադարձներ են և լուսաբանվել են իրենց հետաքրքրող թեմաների առնչությամբ միայն:[3]

---

[3] Տես՝ Գրիգորյան Զ.Տ., , Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Երևան,1978, Դիլոյան Վ.Ա. Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան,1989, Ոսկանյան Վ.Կ.Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցը մինչսովետական պատմագրության մեջ, ԳԱ «Տեղեկագիր» 1957, N 3, Арешян С.Г. Из предистории арменоведения в России, Изв. АН, 1955, N 1, Кюркчян А.А. Русско-иранская война 1826-1828гг. Новые концепции современной историографии, Ереван, 1991. Тунян В.Г., Восточная Армения в составе России /1828-1853/ Ереван, 1989, А.С. Грибоедов и Армения, Ереван, 1995, Россия и Армения, Ереван, 1998, Россия и армянский вопрос, Ереван, 1998, Պողոսյան Ա.Մ., Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Երևան, 1974, Սարուխանյան Ն.Բ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագիտության մեջ, Երևան, 1971,Մուրադյան Մ.Ա. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի ռուսական պատմագիտական և հասարակական մտքի գնահատմամբ,Երևան, 1985, Восточная Армения в русской историографии XIXв. Ереван, 1990 և ուրիշներ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության, Արցախը և հայ-ռուսական հարաբերությունները բաժինների համատեղ նիստում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը հրապարակվել է հեղինակի առանձին մենագրությունում և վեց հոդվածներում: Ատենախոսության նյութերը զեկուցվել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում և միջազգային գիտաժողովում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունն ունի գործնական որոշակի նշանակություն: Նրանում բովանդակող նյութերն ու եզրակացությունները կարելի է օգտագործել հայ-ռուսական հարաբերությունների պատմության վերաբերյալ ընդհանրացնող աշխատություններ և ժողովածուներ ստեղծելիս: Այն օգտակար կարող է լինել նաև պատմագիտական հարցերով զբաղվող մասնագետների համար: Կարծում ենք, որ ներկա ուսումնասիրությունում հայ-ռուսական հարաբերությունների վերաբերյալ փաստական շատ նյութեր թերևս կօգնեն կողմնորոշվելու հասարակական-քաղաքական այն բարդ իրավիճակում, որում ներկայումս հայտնվել է Հայաստանի Հանրապետությունը: Այս առումով աշխատության գործնական նշանակությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի դաշնության միջև գնալով խորացող բազմակողմանի հարաբերություններով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը շարադրված է 19-րդ դարում Ռուսաստանում լույս տեսած հայագիտական գրականության քննախույզ հետազոտության հիման վրա: Ուսումնասիրությունը կատարվել է պատմաքննական վերլուծության, պատմագրական և պատմական գործոնների համադրման և փոխկապակցության հիման վրա՝ հիմք ունենալով պատմական ճշմարտությունն ու անկողմնակալությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից, օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 381 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է հիմնահարցի արդիականությունը, գիտական նորությունն ու գործնական նշանակությունը, նշված են նրա նպատակներն ու խնդիրները, տրված է խնդրո առարկա հարցի ուսումնասիրության աստիճանը:

ԱՌԱՋԻՆ ԳԼԽՈՒՄ՝ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ» ներկայացված է Ռուսաստանում հրատարակված հայագիտական գրականության պատմաքննական վերլուծությունը: Ատենախոսության այս մասը բաժանված է երկու առանձին ենթագլուխների:

Ենթագլուխներից առաջինը կրում է **«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԱՆ ՀԱՐՑԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՌՈՒՍ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»** վերնագիրը: Հայ և ռուս ժողովուրդների պատմական կապերի, հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությունը Ռուսաստանում պայմանավորված էր 19-րդ դարի սկզբին

հայ-ռուսական հարաբերություններում կատարված էական տեղաշարժերով: 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի արդյունքում Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին: Բնականաբար նոր հունի մեջ մտած տնտեսական, քաղաքական և մշակութային կապերն իրենց արտացոլումը պետք է գտնեին ռուս հեղինակների ուսումնասիրություններում: Մյուս կողմից, 19-րդ դարի առաջին կեսի հայագիտական հրատարակություններում հայոց պատմության հիմնահարցերը ամբողջական ընդգրկում չունեցան և խորը հետազոտության առարկա չդարձան: Հայաստանի և հայոց պատմության ուսումնասիրությունը տակավին կրում էր մակերեսային բնույթ: Այս ամենը, հարկավ, ուներ իր պատճառները և պայմանավորված էր տարածաշրջանում Ռուսաստանի հետապնդած ռազմաքաղաքական հիմնական նպատակներով: Կայսրությունում շեշտն առաջին հերթին դրվում էր նորանվաճ երկրների վարչական վերակառուցման ու տնտեսական յուրացման վրա: Այդ էր պատճառը, որ 19-րդ դարի առաջին կեսին, երբ դեռ բացակայում էին Կովկասի մասին հիմնարար հետազոտությունները, Ռուսաստանում առավելապես տիրապետում էին ակնարկների և նկարագրությունների տեսքով գրված ուսումնասիրությունները: Դրանք հիմնականում ճանաչողական բնույթի գործեր էին, որոնցում ընդհանուր գծերով ներկայացվում էր Կովկասը, նրա բնակչությունը, զբաղմունքը, հաղորդվում էր վիճակագրական բնույթի այլ տեղեկություններ: Եվ այնուհանդերձ այդ ուսումնասիրություններում, անշուշտ, առկա էին նաև պատմական հետաքրքրություն ներկայացնող նյութեր, որոնք վերաբերում էին ինչպես Հայաստանին, այնպես էլ Անդրկովկասի մյուս երկրամասերին: Այլ խոսքով՝ 19-րդ դարի առաջին կեսը Ռուսաստանում բուն հայագիտության ձևավորման ժամանակաշրջան էր միայն:

Խնդրո առարկա հարցը համակողմանի քննարկելու նպատակով առանձնացված են հետևյալ հիմնախնդիրները.

Հին Հայաստանը ռուս հետազոտողների աշխատություններում: 19-րդ դարի առաջին կեսի հայագիտական հրատարակությունների շարքում հատկապես առանձնանում է Ս.Ն.Գլինկայի «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատությունը[4]: Ռուս նշանավոր հայագետի այս ուսումնասիրությունը մինչ օրս մեզանում առանձին քննարկման առարկա չի դարձել, եթե նկատի չունենանք որոշ հրատարակություններում նրա մասին եղած հիշատակումները: Մինչդեռ Ս.Գլինկայի հայագիտական ժառանգությունը կարոտ է պատմագիտական լուրջ քննարկման: Նրանում հեղինակն ընդգծում է հայոց պատմության ուսումնասիրության նշանակությունը և բարձր է գնահատում նրա տեղն ու դերը համաշխարհային պատմության մեջ: Ս.Գլինկայի պատկերացմամբ պատմության մեջ ամենից կարևորը ժողովրդի բարոյական ոգու բնութագրումն է, պատմության մեջ նրա թողած արգասավոր հետքը: Ավելին, հայոց պատմությունը քննելիս Ս.Գլինկան հետամուտ է եղել գտնելու այդ դեպքերի ու անցքերի համամարդկային բարոյական նշանակությունը: Դժվար չէ նկատել, որ պատմագիտական առումով, այն հեշտ գործ չէր, և հենց դրանում է Ս.Գլինկայի ուսումնասիրության հայագիտական, եթե ոչ գլխավոր, ապա կարևոր արժեքը: Հեղինակը միաժամանակ, հայ

---

[4] Տես՝, С.Н.Глинка, Обозрение истории армянского народа, М.,1832-1833

ժողովրդին ներկայացնում է որպես ժողովուրդների գոյատևման չափանիշ. թե ինչպես մի ժողովուրդ, որն անցել է այդքան փորձությունների և դժվարությունների միջով, կարողացել է դիմակայել և պահպանել իր ինքնությունը: Աշխատության մեջ բազմիցս շեշտվում է այն հանգամանքը, որ հայերը բարոյական բարձր կերպար ունեցող ժողովուրդ են:

Գրքի հայագիտական կարևոր արժանիքներից մեկն էլ այն է, որ Ս.Գլինկան հատկապես կարևորում է հայերի խաղացած դերը Եվրոպայի և Ասիայի միջև աշխույժ առևտրի կազմակերպման գործում: Հեղինակն այդ երևույթը համարում է հայ ժողովրդի կենսունակությունն ու առաջադիմությունը խթանող հիմնական լծակ: Նրա համոզմամբ Հայաստանը մշտապես «գործուն կամ կողմնակի մասնակցություն է ունեցել Ասիայի կարևոր իրադարձություններին, որոնք կատարվել են քաղաքական, ռազմական և դավանանքի ասպարեզներում»[5]:

Ս.Գլինկայի «Հայ ժողովրդի պատմության տեսության» տրամաբանական շարունակությունը հանդիսացավ «Հայ ժողովրդի պատմության տեսությանը վերաբերող վավերագրերի ժողովածուի» հրատարակությունը[6]: Այս ծավալուն աշխատանքը, որը փութաջան աշխատասիրության արդյունք է, հայ ժողովրդի և հայ-ռուսական հարաբերությունների պատմության մասին հանրագիտարանային բնույթի գործ է: Այնտեղ ամփոփված են բառիս բուն իմաստով այն ամենը, ինչն անմիջականորեն կամ անուղղակի առընչվում են հայ-ռուսական հարաբերությունների պատմության հետ: Եվ եթե դժվար է սույն թեմայի առընչությամբ առաջնություն տալ պատմագիտական որևէ գործի, ապա այս ժողովածուի նկատմամբ բացառությունն այդ իմաստով ուղղակի անհրաժեշտություն է: Վատահորեն կարելի է նշել, որ 19-րդ դարի հայագիտական մյուս ուսումնասիրությունների մեջ այս աշխատանքն արժանի է այդ բնագավառի լավագույն գործերից մեկը համարվելուն:

Հին Հայաստանի պատմության հիմնահարցերը քննարկվել են նաև ռուս այլ հեղինակների գործերում: Հետաքրքիր որոշ մտքերի կարելի է հանդիպել Պ.Զուբովի աշխատությունում[7]: Ուսումնասիրությունը սակայն, գիտական խոր հետազոտություն համարել չի կարելի. այն առավելապես հանրամատչելի գրականության բնույթ ունի:

Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը ռուս հեղինակների գնահատմամբ: Հաջորդ կարևոր հիմնախնդիրը, որը բավականին ուշադրության է արժանացել ռուս հեղինակների կողմից, 19-րդ դարի սկզբին կայսրությանը միացված մարզերի քաղաքական, տնտեսական օգտավետության հարցն էր: Այդ հիմնահարցին անդրադարձել են հրատարակված գրեթե բոլոր ուսումնասիրություններում: Այստեղ էլ առաջնեկության իրավունքը պատկանում է Ս. Գլինկային: Նրա «Հայ ժողովրդի պատմության տեսությունում» զգալի տեղ է հատկացված նաև հայ-ռուսական

[5] Նույն տեղում ч. I, էջ 6:

[6] Տե՛ս Собрание актов относящихся к обозрению истории армянского народа, ч. I- III,М.1833-1838гг.

[7] Տե՛ս П.Зубов,Картина Кавказского края,принадлежащего России и сопредельных оному земель в историческом,статистическом, этнографиченском, финансовом и торговом отношениях, СПБ,1835.

հարաբերությունների պատմության լուսաբանմանը: Հենց սկզբից նկատենք, որ հեղինակն այս հարցում հանդես է եկել որպես շահագրգիռ կողմ և գրքում բերում է Կիևյան Ռուսիայի ժամանակներից սկսած հայ-ռուսական հարաբերությունների պատմականությունն ապացուցող բազում փաստեր: Այս առումով Ս.Գլինկայի աշխատությունը դառնում է նաև սկզբնաղբյուր, քանի որ հեղինակը մանրամասն ներկայացնում և բնութագրում է այն վկայությունները, որոնք վերաբերում են հայ-ռուսական հարաբերությունների պատմության սկզբնավորմանն ու նրա հետագա զարգացմանը:

Բեղմնավոր աշխատանքի արդյունք հանդիսացող այս աշխատանքը, այնուհանդերձ Ս.Գլինկայի առաջին գործը չէր հայագիտության բնագավառում: Մինչ այդ հրապարակի վրա արդեն կար Արևելահայերի գաղթի նկարագրությանը նվիրված արժեքավոր աշխատությունը[8]: Հեղինակն այստեղ ոչ միայն նկարագրել է արևելահայերի գաղթը, այլև ամփոփել և գնահատել է 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմը, հանրագումարի բերել Ռուսաստանի արևելյան քաղաքականության հիմնական արդյունքները: Եվ եթե մեր պատմագիտությունը շեշտը դնում է ազգահավաքման օջախի փաստի վրա, Գլինկան քննելով արևելահայերի գաղթի արդյունքները, դրանում առաջին հերթին տեսնում էր Ռուսաստանի հարավային սահմանների ամրապնդում:

Եթե Ս.Գլինկան համակողմանի մոտեցում է դրսևորել Ռուսաստանի ռազմաքաղաքական նպատակների հարցում ունեցած իր խորհրդածություններում, ապա նույնը չի կարելի ասել դարասկզբի ռուսական մյուս հրատարակությունների մասին: Այսպես, վերը հիշատակված Պ. Զուբովի աշխատանքի ներածականն ուղղակի վերնագրված է. «Կովկասյան երկրամասի կարևորության և գաղութացման ուղիների մասին»: Հայաստանի և հայ ժողովրդի մասին Պ. Զուբովի արտահայտած կարծիքներին ու մտորումներին ծանոթությունը միանգամից ակնառու է դարձնում հարցին մեծապետական դիրքերից հեղինակի մոտեցումները: Պ. Զուբովի գրքին մոտ է կանգնած 19-րդ դարի սկզբի մեկ այլ ռուս հեղինակի՝ Օ. Եվեցկու աշխատությունը[9]: Հայաստանի վերաբերյալ պատմագիտական նյութն այստեղ ևս սակավ է: Նույնը կարելի է ասել նաև Անդրկովկասի վիճակագրական, ազգագրական, տեղագրական և ֆինանսական հարցերին նվիրված տեսության մասին:[10] Պատմագիտական առումով, թերևս ուշագրավ նյութեր կան Ն. Նեֆեդևի «Հայացք հայկական մարզին» գրքույկում[11], որը Հայկական մարզի ուսումնասիրության առաջին փորձերից մեկն էր:

Ատենախոսության հաջորդ ենթագլուխը վերնագրված է՝ **«ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ»:** 19-րդ դարի առաջին երեսնամյակին Անդրկովկասը կայսրությանը միացնելուց հետո ստեղծվեց մի իրավիճակ, որն ընդհանուր էր այնտեղ բնակվող բոլոր հպատակ ազգերի համար: Սկսվում է համեմատաբար խաղաղ առաջադիմության

[8] Տե՛ս С.Н.Глинка, Описание переселения армян аддербиджанских в пределы России, М., 1831.

[9] Տե՛ս.О.Евецкий, Статистическое описание Закавказского края, СПБ, 1835.

[10] Տե՛ս. Обозрение российских владений за Кавказом, СПБ, 1836.

[11] Տե՛ս. Н.Нефедьев, Взгляд на Армянскую область, СПБ, 1839.

ժամանակաշրջան: Արդեն դարասկզբին հայերն ապացուցեցին, որ գտնվելով օտարի տիրապետության տակ, չեն կորցրել բարոյական իրենց ներուժն ու գիտակրթական ավանդույթները: Այդ ընթացքում Ռուսաստանում նպաստավոր նախադրյալներ ստեղծվեցին հայագիտության ատիճանական առաջընթացի համար: Այդ առաջընթացի սկզբնավորողը դարձավ սկզբում Մոսկվայի Լազարյան ճեմարանը, իսկ այնուհետև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Ուստի պատահական չէր, որ 19-րդ դարի հայագիտության երախտավորները հատկապես այդ դպրոցների ուսուցիչներն ու շրջանավարտներն էին:

Թեպետ, դարի առաջին կեսի հայագիտական ուսումնասիրությունները գիտական առումով սահմանափակ հետազոտություններ էին, սակայն մյուս կողմից, հարկ է նշել, որ նույն ժամանակաշրջանի ռուս հեղինակների ուսումնասիրությունների համեմատ, հայ հեղինակները գիտական վերլուծության տեսակետից մի քայլ առաջ էին իրենց ռուս գործընկերներից: Նրանց աշխատանքներին հատուկ էր հայոց պատմության պատմա-քննական վերլուծությունը, նկատելի էր աղբյուրների ու գրականության անհամեմատ խորը իմացությունը: Եվ եթե ռուս հեղինակները, բացառությամբ Ս.Գլինկայի, չունեին հայոց պատմության աղբյուրագիտության պատրաստություն, ապա հայ հեղինակները դրա պակասը չունեին: Հակոբ և Դավիթ Արզանովները Լազարյան ճեմարանի լավագույն սաներից էին, իսկ Ալ. Խուդաբաշյանը ոչ միայն քաջածանոթ էր հայ պատմական գրականությանը, այլև ուներ դրանց հարուստ գրադարանը:

Պատմագիտական տեսակետից հայ հեղինակների գործերը մեկ այլ առավելություն ևս ունեին: Եթե ռուս պատմաբանները հայոց պատմությանն անդրադառնում էին ամենից առաջ Ռուսաստանի ռազմա-քաղաքական նպատակների ու շահերի տեսանկյունից, ապա հայ հեղինակներն իրենց խնդիրը տեսնում էին Հայաստանի պատմական հարուստ անցյալի հերոսական էջերը ռուս ընթերցողին ներկայացնելու մեջ: Այդ երևույթն, անշուշտ, ուներ իր բացատրությունը: Դարասկզբում Կովկասում ընթացող իրադարձությունները, պատմական Հայաստանի մի մասի միացումը կայսրությանը, հայ հեղինակներին խնդիր էր առաջադրում ռուս հասարակայնությանը ներկայացնել Հայաստանի հարուստ պատմական անցյալը, շեշտը դրվում էր հայոց պետականության պատմության, Առաջավոր Ասիայի քաղաքական իրադարձություններում նրա խաղացած որոշակի դերի վրա: Ուստի պատահական չէր, որ դարասկզբին ռուսերեն լեզվով լույս տեսած հայագիտական առաջին գործերից մեկը, որի հեղինակները նույն Դավիթ և Հակոբ Արզանովներն էին, հրապարակ եկավ 1827 թվականին, երբ Կովկասում բուռն ռազմական գործողություններ էին ծավալվում և ընթացքի մեջ էր ռուս-պարսկական պատերազմը: Այլ խոսքով, Ռուսաստանում հայ հեղինակների շատ գործերի ի հայտ գալն ուներ ոչ միայն հայագիտական, այլև կարևոր քաղաքական նշանակություն: Ռուսաստանի գիտական և ընթերցասեր հասարակայնությանը ներկայացվեց Հայաստանի հարուստ պատմական անցյալը, կայացավ նրանց առաջին ծանոթությունը հայ ժողովրդի պատմության հետ:

Ատենախոսության այս բաժնում քննության են առնված հայ հեղինակների այն գործերը, որոնք բնութագրում են Ռուսաստանում դարի առաջին

կեսի հայագիտության ուսումնասիրության աստիճանը և նրա հիմնական ուղղությունները:

Ինչպես արդեն նշեցինք, 19-րդ դարի առաջին կեսին Ռուսաստանում հրատարակված հայագիտական գործերի մի մասը նկարագրական բնույթի էին: Այդպիսի մի նկարագրություն, որն, անշուշտ, պատմագիտական արժեք ունի, հրատարակվեց Ս.Պետերբուրգում 1811թ. Հովհաննես սարկավագ Հովհաննիսյանի ռուսերեն թարգմանությամբ: Գիրքը ուներ «Վերջին երեսուն տարում՝ /1779-1809թթ/ Հայաստանում կատարված արժանահիշատակ անցքերի նկարագրություն» խորագիրը[12]: Հեղինակը իշխան Գևորգ Խուրովն էր /Խուրյան/: Գրքի հայերեն բնագիրը դեռևս հայտնաբերված չէ[13]:

Գ.Խուրովի աշխատությանն անդրադառնալու մեր շարժառիթը, թերևս, պայմանավորված չէ միայն նրա պատմագիտական արժեքով: Հայտնի է, որ ներկայիս պատմագիտության հրատապ հարցերից մեկը պատմական իրողությունները փաստական իրական հիմքի վրա քննելու խնդիրն է, բաղդատման կամ լրացուցիչ տվյալների հիման վրա պարզելու այս կամ այն աղբյուրի իրական արժեքը, նրա հավաստիությունը: ՈՒստի այս առումով, պետք է նշենք, որ մեզանում հանիրավի անտեսված է Գ. Խուրովի աշխատությունը: Մի գործ, որն օգնում է նորովի գնահատելու դարասկզբին կարևոր նշանակություն ունեցող մի իրադարձություն՝ 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմում երևանյան առաջին արշավանքի հարցը: Այն բազմիցս քննարկվել է պատմագիտական ուսումնասիրություններում: Փաստ է նաև, որ հետազոտողներն այս հարցում գրեթե համերաշխ են: Երևանյան արշավանքի անհաջողությունը դիտարկվում է մի կողմից որպես ռուսական բանակի հրամանատար Ցիցիանովի անվճռական գործողությունների հետևանք, մյուս կողմից՝ Երևանի Մամադ խանի նախաձեռնած դիվանագիտական խորամանկ խաղերի արդյունք[14]:

Մեր կարծիքով, հետազոտողների ուշադրությունից վրիպել են այդ արշավանքի կարևոր շատ մանրամասներ ու պարագաներ, որոնք նոր խորհրդածությունների տեղիք են տալիս: Գ. Խուրովի աշխատությունը ուշագրավ է նաև այն առումով, որ հեղինակն այդ դեպքերի անմիջական մասնակիցն ու ականատեսն է:

Հեղինակի նկարագրության գլխավոր առանցքը Երևանի Մամադ խանի ռուսական հպատակություն ընդունելու իրողությունն է: Քննարկելով այդ հարցի հետ կապված նրա խորհրդածությունները, կարծում ենք, որ եթե Խուրովն ինչ-որ տեղ չափազանցնում է, սակայն փաստերը չի աղավաղում: Հարցն այստեղ, իհարկե, այն չէ, թե հոգու խորքում Երևանի խանը երազում էր ռուսական հպատակություն ընդունել: Մենք ևս բացառում ենք նման իրողության

---

[12] Е.Хубов, Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние 30 лет /1779-1809 гг./, СПБ., 1811.

[13] Տե՛ս Լ.Մելիքսեթ-բեկ, Գևորգ Խուրով /նյութեր և նոթեր/, Տեղեկագիր, 1950,N 2:

[14] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հ.4, Ե., 1984,Զ.Տ. Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե., 1978,Վ.Ա.Դիլոյան, Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, Վ.Պարսամյան, Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Ե., 1978, և ուրիշներ:

գոյությունը: Սակայն, չենք կարող հաշվի չառնել նաև այն հանգամանքները, որոնք ուղղակի ստիպում էին Մամադ խանին՝ ընդունելու այդ հպատակությունը: Բնականորեն, հարց է ծագում՝ ուրիշ ի՞նչ կարող էր ձեռնարկել Մամադ խանը, երբ ռուսական բանակն արդեն Երևանի բերդի շեմին էր: Իրադրությունը փոխվում էր ժամ առ ժամ: Հետևաբար, հարցի պատասխանը պետք է փնտրել նրա մեջ, որ պարսից խաները զգալով ռուսական զենքի զորությունը, իրենց կամքին հակառակ, սեփական տիրապետությունը որևէ կերպ երկարաձգելու միակ միջոցը տեսնում էին ռուսական հպատակություն ընդունելու մեջ և ստիպված էին համակերպվել այդ մտքի հետ: Կարծում ենք, սա է ռեալ իրողությունը: Մյուս կողմից, պետք է նշել, որ Խուրովի հաղորդած տեղեկությունները հաստատվում են նաև ռուս հեղինակների կողմից[15]:

Դարասկզբին հայոց պատմությանը նվիրված ռուսերեն լեզվով լույս տեսած առաջին գործը Հակոբ և Դավիթ Արզանովների «Հայոց թագավորության պատմության ուրվագծման փորձ» աշխատությունն էր[16]: Արզանովները գրեթե անհայտ են հայ պատմագիտությանը: Տակավին հպանցիկ և կցկտուր տեղեկություններ կան մեզանում նրանց մասին: Հայկական ներկայիս հանրագիտարաններում հիշատակված չէ ո՛չ նրանց անունը, և ո՛չ էլ նրանց ուսումնասիրությունը: Արզանով եղբայրների աշխատությունը բազում առումներով ուշագրավ ուսումնասիրություն է և պատմագիտական լուրջ քննության կարիք ունի:

Արզանովներն աշխատությունում ամենից առաջ քննության են առել հայկական աղբյուրների արժանահավատության հարցը: Նրանք բավականին քաջատեղյակ են նաև ժամանակի եվրոպական հայագիտական գրականությանը և գրքում լայնորեն քննարկել են հին աշխարհի պատմության աղբյուրների նկատմամբ ունեցած նրանց տեսակետները: Հեղինակները փաստում են այն միտքը, որ հայոց պատմությունը քննելիս, հավաստիությունն ամենից առաջ պետք է վերապահել հայկական, ապա նոր միայն օտար աղբյուրներին, որոնք «այդքան կտրուկ» ընդունված են համաշխարհային պատմագիտության մեջ[17]: Գործը ձեռնարկելու նպատակներից մեկն էլ հայոց պատմությունը որպես համաշխարհային պատմության բաղկացուցիչ մաս ներկայացնելն է: Նրանք ափսոսանք են հայտնում, որ «Հայաստանի պատմությունը, որը հին աշխարհի շատ պետությունների համար վիթխարի փոփոխությունների պատճառ է դարձել, այժմ չի մտնում ընդհանուր պատմության դասընթացի մեջ»[18]:

Դարի առաջին կեսերին Ռուսաստանում ռուսերեն լեզվով հայոց պատմության ընդհանուր շարադրանքի առաջնեկությունը պատկանում է Ալեքսանդր Խուդաբաշյանին /1780-1862/: 1859թ. Սանկտ Պետերբուրգում լույս տեսավ նրա «Հայաստանի տեսությունը աշխարհագրական, պատմական և

[15] Տե՛ս Н.Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т.3, СПб.,1886. П.Г.Бутков, Материалы для новой истории Кавказа, СПб., 1869, ч.1, с.73-74. Кавказский календарь, 1864, с.198.

[16] Տե՛ս Яков и Давид Арзановы, Опыт начертания истории царств Армянского М..1827 .

[17] Նույն տեղում, էջ XIII:

[18] Նույն տեղում, էջ XIX:

գրական առումներով» աշխատությունը[19]: Ալ. Խուդաբաշյանը 19-րդ դարի Պետերբուրգի հայագիտական դպրոցի նշանավոր ներկայացուցիչն է: Ասել թե, Խուդաբաշյանը հայտնի չէ մեր պատմագիտական շրջանակներին, իրավացի չէր լինի: Սակայն, հարկ է նշել, որ չնայած հրապարակի վրա եղած իր մեծածավալ ու արժեքավոր մենագրության, Խուդաբաշյանն արժանի ուշադրության չի արժանացել մեր պատմաբանների կողմից: Նրան տարբեր որակումներ են տվել, բայց ոչ պատմաբանի: Ուստի արդի պահանջներից ելնելով՝ Ալ.Խուդաբաշյանի պատմագիտական ժառանգությունը կարոտ է վերագնահատման:

Պատմագիտական առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Խուդաբաշյանի գրքի երկրորդ մասը, որը կրում է «Հայաստանի քաղաքական պատմությունը» խորագիրը: Հայոց պատմությունը հեղինակը տարաբաժանում է վեց ժամանակահատվածների, ելնելով ոչ միայն դինաստիական գործոնից, այլև հայոց պատմության կարևոր իրադարձությունների տրամաբանությունից: Այս ժամանակահատվածներից զատ, նա ավելորդ չի համարել առանձին բաժին նվիրել նաև հայկական գաղթօջախներին:

19-րդ դարում Ռուսաստանում հրատարակված պատմագիտական գրականության մեջ այսպիսի մի հետաքրքիր միտում է նկատվում: Հայոց պատմության ընդհանուր շարադրանքին զուգահեռ՝ անդրադարձ է արվում խոշորագույն տերություններում հայերի ծավալած գործունեությանը: Խուդաբաշյանի մոտ ևս հանգամանորեն ներկայացված է եվրոպական և ասիական երկրներում հայերի ծավալած գործունեությունը:

Խուդաբաշյանը հայագիտության մեջ մի կարևոր նորամուծություն էլ ունի: Նա առաջինն էր, որ ռուս ընթերցողին այդպես հանգամանորեն ներկայացրեց հայ եկեղեցու ամբողջական պատմությունը՝ Գրիգոր Լուսավորիչից սկսած մինչև իր օրերը: Ընդ որում, հայ եկեղեցու պատմությանը հեղինակն անդրադառնում է ոչ թե առանձին դրվագներով, այլ հարցը ներկայացնում է ամբողջական ձևով:

Ատենախոսությունում քննության են առնված նաև Ալ.Խուդաբաշյանի աշխատության պատմագիտական մյուս կարևոր շեշտադրումները:

Ատենախոսության **ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ** նվիրված է 19-րդ դարի երկրորդ կեսին Ռուսաստանում հրատարակված հայագիտական գրականության պատմաքննական վերլուծությանը և կրում է **«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ»** վերնագիրը: Ատենախոսության այս մասը ևս բաժանված է երկու առանձին ենթագլուխների:

Առաջին ենթագլխում՝ **«ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ»** հանգամանորեն ներկայացված է ռուս հեղինակների հայոց պատմության առանձին հարցերին նվիրված ուսումնասիրությունները:

Հետռեֆորմյան ժամանակաշրջանը Ռուսաստանի պատմության մեջ նշանավորեց զարգացման նոր փուլ: Զարգացող կապիտալիստական հարա-

[19] Տե՛ս. Ал.Худабашев "Обозрение Армении в географическом, историческом и литературном отношениях" СПБ, 1859.

բերությունները գիտության շատ ճյուղերի, այդ թվում և պատմագիտության առջև դրեցին նոր հիմնախնդիրներ: Ուստի ժամանակշրջանի ռուսական պատմագիտությանը բնորոշ էր տեսական գիտելիքների նկատելի աճը, փաստական հսկայական նյութի կուտակումը, պատմական հիմնահարցերի նկատմամբ նոր հայեցակետերի ձևավորումը, ուսումնասիրության առաջադիմական մեթոդների ներդրումը: Այդ ընթացքում նկատելի տեղաշարժեր կատարվեցին նաև հայագիտության բնագավառում: Հրապարակ եկան Հայաստանին և հայոց պատմությանը նվիրված մի շարք ուշագրավ ուսումնասիրություններ: Ընդ որում, հայոց պատմության ուսումնասիրությունը հիմնահարց դարձավ ոչ միայն պատմաբանների, այլ նաև ռուսական հասարակական և քաղաքական մտքի շատ այլ ներկայացուցիչների համար:

Այդ ուսումնասիրությունները զգալի նպաստ բերեցին հայոց պատմության ինչպես ամբողջական, այնպես էլ նրա առանձին հիմնահարցերի գիտական մշակման ու ուսումնասիրության խնդրում: Նրանցում բավականին հանգամանորեն ու մանրամասն ներկայացված են Հայաստանում կատարված պատմական իրադարձությունների ընթացքը: Ռուս հեղինակներն իրենց որոշակի նպաստը բերեցին նաև հայ ժողովրդի մասին հասարակական կարծիքի ձևավորման խնդրում: Այդ աշխատությունների արդյունքում ռուսական լայն հասարակայնության ուշադրությունը հրավիրվեց հայ ժողովրդի ճակատագրի ու նրա մղած ազատագրական պայքարի հարուստ պատմության վրա: Նրանցից շատերը գիտական նշանակությունից զատ, անշուշտ, ճանաչողական և հայանպաստ նշանակություն ունեցան:

Հայոց պատմության հանդեպ ունեցած նման հետաքրքրությունն, անշուշտ, բացատրվում էր մի շարք հանգամանքներով: Ակնհայտ է, որ ռուս հեղինակները Կովկասը դիտելով որպես կայսրության անբաժանելի մաս, պետք է աշխատեին հնարավորին չափ ամբողջացնել նրա պատմությունը: Կարևոր հանգամանք էր նաև դարի երկրորդ կեսին՝ 1853-1856թթ. և 1877-1878թթ. Թուրքիայի դեմ Ռուսաստանի մղած երկու պատերազմները, որոնց մշտական թատերաբեմերից մեկն էլ Հայաստանն էր: Իրենց հայրենակիցներին այդ պատերազմների կարևորության մեջ համոզելու, ինչու չէ, նաև հայրենասիրական մղումներ առաջացնելու համար, ռուս հեղինակները դիմում էին Կովկասի նվաճման պատմության մանրամասներին, ակնկալելով նաև տեղի ժողովուրդների աջակցությունը:

Մյուս կարևոր հանգամանքը, որի արդյունքում աշխուժացավ հետաքրքրությունը հայագիտական ուսումնասիրությունների նկատմամբ, կապված էր դարի վերջերին միջազգային իրադրության սրման հետ, երբ համաշխարհային թատերաբեմում հստակ ուրվագծվում էին հակամարտող կողմերը: Գաղտնիք չէր, որ տարածաշրջանում Ռուսաստանի համար որպես գլխավոր ախոյան շարունակում էր մնալ Թուրքիան: Այս իմաստով, Ռուսաստանը կարևոր նշանակություն էր տալիս տարածաշրջանի երկրների, և առաջին հերթին Հայաստանի մասին ուսումնասիրությունների աշխուժացմանը, որպես իր վստահելի և մշտական դաշնակցի: Ռուսաստանում հայագիտական թեմա է դառնում նաև արևմտահայության հիմնահարցը: Իհարկե, կրկին պետք է նշել, որ ինչպես առաջին կեսի, այնպես էլ դարի երկրորդ կեսի ուսումնասիրություններում հայագիտական հարցերը քննարկվում և ներկայացվում էին Ռուսաստանի ռազմա-քաղաքական հետաքրքրությունների

տեսանկյունից:

Այս ամենով հանդերձ, 19-րդ դարի երկրորդ կեսի հայագիտական ուսումնասիրությունները հայոց պատմության հիմնահարցերի ամբողջական ընդգրկման և հետազոտման խորության տեսակետից էապես տարբերվում էին նախորդ պատմափուլի հետազոտություններից: Եթե 19-րդ դարի առաջին կեսին հայոց պատմության ուսումնասիրությունը կրում էր մակերեսային բնույթ, ապա դարի երկրորդ կեսը նշանավորվեց նախ, կովկասագիտական ազդեցիկ դպրոցի ձևավորումով /Պ.Բուտկով, Ն.Դուբրովին, Վ.Պոտտո և ուրիշներ/, ապա նաև հայագիտական մի շարք ուշագրավ աշխատությունների հրապարակումով: Վարչական վերակառուցման ու տնտեսական յուրացման հարցերի կողքին, ինչը հատուկ էր դարի առաջին կեսի հրատարակություններին, կայսրությունում հետզհետե նկատելի է դառնում հետաքրքրությունը Հայաստանի պատմական անցյալի և մշակույթի հանդեպ: Պետական հոգացողությամբ և հայ երևելի այրերի նախաձեռնությամբ վերջնականապես ձևավորվում ու ավարտուն տեսք է ստանում հայագիտության ռուսական գիտական դպրոցը:

Ներկայացնելով Ռուսաստանում հրատարակված հայագիտական գրականությունը, մենք հետամուտ ենք եղել ոչ միայն ուսումնասիրել և գնահատել ռուս պատմաբանների կոնկրետ ներդրումը հայ-ռուսական հարաբերությունների և հայոց պատմության հիմնահարցերի գիտական մշակման խնդրում, այլև ցույց տալ այս բնագավառում կատարված նկատելի տեղաշարժերը:

Ատենախոսության այս գլխում մենք նպատակահարմար ենք գտել առանձնացնել հետևյալ հիմնախնդիրները:

Հին և միջնադարյան Հայաստանի պատմության հարցերի լուսաբանումը ռուս հետազոտողների աշխատություններում: 19-րդ դարի երկրորդ կեսին ռուս հեղինակներն իրենց հնարավորության սահմաններում փորձեցին ամբողջացնել հին և միջնադարյան Հայաստանի պատմությունը, արժեքավորել նրա տեղը հին աշխարհի կարևորագույն իրադարձություններում: Դրանցից ռուս ընթերցողը լիովին կարող էր պատկերացում կազմել Հայաստանի պատմական անցյալի մասին, որը ժամանակի առումով, անշուշտ, գնահատելի էր:

Արևելյան Հայաստանի միացումից հետո, ցարական կառավարությունը ձեռնարկեց Հայկական մարզի պատմության, նրանում բնակվող ժողովուրդների հասարակական-կենցաղային պայմանների, սովորույթների ուսումնասիրությունը: Լինելով պետական բարձրաստիճան պաշտոնյաների հանձնարարություններ, դրանք ըստ էության ունեին քաղաքական որոշակի, իսկ երբեմն՝ շեշտված միտվածություն: Եվ այնուհանդերձ, նրանցում ևս կարելի է հանդիպել պատմագիտական որոշակի հետաքրքրություն ներկայացնող նյութերի: Այդպիսի ուսումնասիրությունների թվին ոչ մեծ վերապահումներով կարելի է դասել Ի. Ի. Շոպենի աշխատությունը[20]:

Ի.Շոպենի աշխատության մանրամասն հետազոտությունը սակայն, մեզ բերում է այն համոզման, որ հեղինակի այս ուսումնասիրությունը գիտական

---

[20] Տե՛ս И.И.Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПБ, 1852.

խստագույն քննադատության չի դիմանում: Հին Հայաստանի մասին արված նրա շատ մտքեր ու եզրակացություններ մտացածին ու անընդունելի են: Դա նախ և առաջ վերաբերում է աղբյուրներին: Ի. Շոպենն իր կողմից օգտագործած աղբյուրների հետ վարվել է կամայականորեն և դրանք մեջ է բերել առանց անհրաժեշտ վերլուծության: Անընդունելի են նաև հեղինակի բերած ծանոթագրություն-եզրակացությունները:

Իվան Շոպենը Կովկասին նվիրված ուրիշ աշխատություն էլ ունի:[21] Ուսումնասիրությունը գրեթե դուրս է մնացել պատմաբանների ուշադրությունից: Այն հրատարակվել է Պետերբուրգում 1866թ. և ինչպես ինքն է գրում, «նշումներին» հեղինակը ձեռնամուխ է եղել նպատակ ունենալով տեղեկություններ հավաքել Կովկասի հին շրջանի պատմության մասին[22]: Շոպենն այստեղ էլ անխոցելի չէ. շատ տեղերում հեղինակն առանց քննության ու հատուկ հետազոտության, գրում է այն, ինչն իրեն ճշմարիտ է թվում:

Մինչ այժմ հայ պատմագիտությունը Վ.Պոտտոյի գիտական ժառանգությանն անդրադարձել է միմիայն 19-րդ դարի առաջին երեսնամյակի կովկասյան պատերազմների առումով: Մեր կարծիքով սակայն, նրա գիտական ժառանգության մեջ մոռացության է մատնված մի կարևոր բաժին, որում քննարկվում են ոչ թե պատերազմական իրավիճակներ, այլ կատարվում է հայոց պատմության համառոտ քննական վերլուծություն: Այդ բաժինը Պոտտոյի ուսումնասիրությունում վերնագրված է մեկ ընդհանուր խորագրով. «Արարատի երկիրը»[23]:

Ռուսաստանում այնքան էլ մեծ չէ այն հեղինակների թիվը, որոնք փորձեցին հայոց պատմությանը նվիրված գործեր գրել: Պատճառն, իհարկե անբացատրելի չէ: Անդրադառնալ մի երկրի պատմության, որն այդքան լեցուն է իրադարձություններով և ունի պատմագիտական հարուստ գրականություն, անշուշտ, հարկ էր ունենալ աղբյուրագիտական բավարար պատրաստություն: Այնուհանդերձ, չնայած այդ դժվարություններին, ռուս պատմագիտության մեջ գտնվեցին նաև այդպիսիները: Նրանցից մեկը Վիկտոր Աբազան էր. 1888 թվականին Ս.Պետերբուրգում լույս տեսավ նրա «Հայոց պատմություն» գիրքը[24]:

Եթե Վ. Աբազայի շարադրանքին մոտենանք հայագիտական ինչ-որ նորություն ասելու առումով, անտարակույս, հիասթափություն կապրենք: Ավելին, եթե կուզեք, նույնիսկ կրկնում է նախորդներին: Սակայն նրա շարադրանքում ևս կան ուշագրավ մտքեր, այսպես. «Հայերի մասին տեղեկությունների անբավարարությունը - գրում է նա,- հողագործական այս ժողովրդի մասին հանիրավի եզրակացությունների առիթ է ծառայել: Շատերը հայերի մեջ միայն առևտրականներ են տեսնում, մինչդեռ այդպիսի բնութագրումների հիմքում չկան ո՛չ պատմական տեղեկություններ և ո՛չ էլ նույնիսկ եվրոպական արևելագետների մոտ կարելի է հանդիպել նման

[21] Տե՛ս И.И.Шопен.Новые заметки к древней истории Кавказа и его обитателей, СПБ,1866.

[22] Նույն տեղում, էջ 1:

[23] Տե՛ս В.Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах,легендах и биографиях, СПБ, 1885.

[24] Տե՛ս В.А.Абаза, История Армении, СПБ 1888.

մտքերի... Այս բնորոշումներն ըստ էության ամբողջական չեն և հիմքում անարդարացի»[25]:

Հայ եկեղեցու պատմությանն է նվիրված Ալ. Աննինսկու ուշագրավ աշխատությունը[26]: Նրա մյուս աշխատությունը նվիրված է հայ մատենագիտությանը[27], ուր հեղինակը բարձր է գնահատում հայ պատմագիրներին, նշում նրանց գործերի կարևորությունը հին աշխարհի պատմության ուսումնասիրության խնդրում:

Առենախոսությունում տրված է վերջիններիս քննական վերլուծությունը, շեշտված են նրանցում պարունակող պատմագիտական կարևոր ընդգծումները:

Իհարկե, Ռուսաստանում լույս տեսնող ոչ բոլոր հրատարակություններում էր ճշմարտացի լուսաբանվում հին Հայաստանի պատմության հարցերը: Այսպես, 1897թ. Ս.Պետերբուրգում լույս տեսավ Մ.Ախովի «Ակնարկներ հայկական «պետության» պատմությունից» աշխատությունը[28]: Նրա գրքին անդրադառնալու շարժառիթը բնավ պայմանավորված չէ նրա պատմագիտական արժեքով: Հեղինակի բազում եզրակացություններն ու բնութագրումները ոչ մի կապ չունեն իրերի իրական վիճակի հետ, ավելին՝ դրանք հակագիտական են:

Հայագիտական նյութերը ռուս պատմաբանների Կովկասին և կովկասյան պատերազմներին նվիրված աշխատություններում: Ժամանակագրական տեսակետից 19-րդ դարի Հայաստանի պատմությանը վերաբերող առաջին գործը մեզ արդեն ծանոթ Ի.Շոպենի աշխատությունն էր[29]: Հենց սկզբից նշենք, որ այստեղ արդեն հարցը հստակեցնելու անհարժեշտություն կա: Եթե Հին Հայաստանի պատմության հարցերում հեղինակը բազում հերքելի տեսակետներ ուներ, ապա 19-րդ դարի առաջին կեսի Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերի լուսաբանության խնդրում, Շոպենն, անշուշտ, գերազանցում է իր գործընկերներին: Նրա աշխատությունում տրված է Հայկական մարզի մանրամասն ու հանգամանալից տեսությունը, թեպետ այստեղ էլ Շոպենի առանձին մտքեր համոզիչ չեն: Ասվածը հատկապես վերաբերում է հայկական մարզի ժողովուրդներին ռուս պաշտոնյայի տված բնութագրումներին: Այլ խոսքով՝ թեպետ Ի.Շոպենի աշխատությունների ուսումնասիրությունը երկակի մտահանգումների տեղիք է տալիս, այնուհանդերձ, դրանք պատմագիտական որոշակի արժեք են ներկայացնում:

Ինչպես արդեն նշեցինք, պատմագիտական առումով 19-րդ դարի երկրորդ կեսը Ռուսաստանում նշանավորվեց կովկասագիտական ազդեցիկ

[25] Նույն տեղում, էջ VI:

[26] Տե՛ս. Ал. Аннинский, История армянской церкви, Кишинев, 1900:

[27] Տե՛ս. Ал.Аннинский, Древние армянские историки, как исторические источники, Одесса, 1899.

[28] Տե՛ս. М.Ахов, Очерки из истории Армянского "государства" СПБ, 1897.

[29] Տե՛ս. И.И.Шопен, Исторический памятник состояния Армянской области в поху ее присоединения к Российской империи, СПБ, 1852.

դպրոցի ստեղծումով, որի ակնառու ներկայացուցիչները դարձան Պ. Բուտկովը, Ն. Դուբրովինը և Վ. Պոտտոն: Նրանց աշխատությունների շնորհիվ ոչ միայն ամբողջացավ 18-19-րդ դարերի Անդրկովկասում կատարված իրադարձությունների պատմությունը, այլև նրանց հրապարակած բազում նյութերն ու վավերագրերը աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեցան հայոց պատմության ուսումնասիրության խնդրում:

Նրանցից առաջինը՝ Պ.Գ.Բուտկովը Կովկասին անծանոթ անձնավորություն չէր. մասնակցություն է ունեցել Վ. Զուբովի 1796թ արշավանքին, 1801-1802թթ., վարել է Կովկասի կառավարչապետ գեներալ Կնորինգի գրասենյակի գործերը: Նրա արդյունավետ աշխատանքի հանրագումարը հանդիսացավ 1869 թվականին հրատարակված հեղինակի եռահատոր աշխատությունը՝ «Կովկասի նոր պատմության նյութեր /1722-1803թթ./»[30]:

Թեպետ Պ. Գ. Բուտկովի աշխատությունը հայագիտական նյութի ընդգրկման առումով համեմատաբար հարուստ չէ, սակայն նրանում տեղ գտած շատ իրադարձությունների վերլուծություններն ու հեղինակի արտահայտած կարծիքները, անշուշտ, պատմագիտական արժեք են ներկայացնում: Այդ նյութերը բավարար հիմք են տալիս լրացնելու 18-19-րդ դարերի հայոց պատմության առանձին հիմնահարցեր:

Ռուսաստանում կովկասագիտական դպրոցի մյուս նշանավոր ներկայացուցիչը Ն. Դուբրովինն էր: Անդրկովկասին նվիրված նրա առաջին գործը «Անդրկովկասը 1803-1806թթ.» աշխատությունն էր, ուր հեղինակը հանգամանորեն անդրադարձավ դարասկզբին տարածաշրջանում խմորված իրադարձություններին:

Պատմագիտական շրջանակներին Ն.Դուբրովինն առավելապես հայտնի է «Պատերազմների և Կովկասում ռուսների տիրապետության պատմություն» մեծածավալ աշխատությամբ[31]: Ընդհանուր առմամբ, Ն.Դուբրովինի այս աշխատանքը հայագիտական հարուստ նյութեր չի պարունակում, սակայն նրա հաղորդած շատ տեղեկություններ կարևոր արժեք են ներկայացնում: Ռուս պատմագիտության մեջ Դուբրովինը առավել հանգամանորեն անդրադարձավ Ռուսաստանի և պարսկական խանությունների հարաբերությունների հարցին, որը հաճախ միանշանակ է ներկայացվում մեր պատմագիտության մեջ: Հեղինակը հարցին անդրադառնում է հիմնավոր և, որ կարևոր է, իր եզրակացությունները հաստատում է արխիվային վավերագրերով:

Քննարկելով Ն. Դուբրովինի աշխատությունը, ակամայից պահանջ է առաջանում խորհրդածելու մի կարևոր հարցի շուրջ: Պատմագիտական որոշ ուսումնասիրություններում ռուս-պարսկական առաջին պատերազմի հետևանքով պարսկական խանությունների Ռուսաստանին միացումով կարծես ավարտված է համարվում այդ հարցի քննարկումը: Տվյալ պարագայում, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի և Շորագյալի միացումից հետո մինչև ռուս-պարսկական երկրորդ պատերազմն ընկած ժամանակաշրջանը կարծես անհայտության մեջ է: Հեղինակն այս հարցը աննկատ չի թողնում և իր

[30] Տե՛ս.Պ.Գ.Бутков, Материалы для новой истории Кавказа, ч. I-III, СПБ, 1869.

[31] Տե՛ս.Н.Дубровин, История войны и владычества русских на Кавказе, СПБ, 1871.

աշխատությունում բերում է բավականին ուշագրավ նյութեր, որոնք անկասկած, լրացնում են այդ բացը:

Ռուսական կովկասագիտական դպրոցի թերևս ամենանշանավոր ներկայացուցիչը Վ. Ա. Պոտտոն է: Նրա թողած պատմագիտական ժառանգության շնորհիվ ոչ միայն հարստացավ կովկասագիտությունը Ռուսաստանում, այլև մեծ նպաստ բերեց 19-րդ դարի հայոց պատմության կարևոր շատ իրադարձությունների լուսաբանման խնդրում: Մեր պատմագիտության մեջ 19-րդ դարի առաջին երեսնամյակի պատերազմներին նվիրված և ոչ մի աշխատությունում հնարավոր չի եղել շրջանցել ռուս նշանավոր այդ պատմաբանի գործերը: Միաժամանակ, հարկ է նշել, որ Վ. Ա. Պոտտոյի գիտական ժառանգությունը մեզանում հանգամանալից ուսումնասիրության չի ենթարկվել:

Կովկասին նվիրված Վ.Պոտտոյի հիմնարար գործը «Կովկասյան պատերազմը առանձին ակնարկներում, դիպվածքներում, փառաբանումներում և կենսագրականներում» ծավալուն աշխատություն է՝ իր քսան առանձին թողարկումներով[32]: Հեղինակն այն սկսում է հետևյալ ուշագրավ մի խորհրդածությունով. «Կովկասյան պատերազմն ավարտվեց: Մեծ նպատակն իրագործվեց: Եվ Ռուսաստանը, որն արդեն չի տագնապում երկարատև պատերազմի ամպրոպից, չի մոռանա իր հերոսներին... առանց նրանց անհնար կլիներ երկրամասի հպատակեցումը, որը պատմականորեն անհրաժեշտ էր, Ռուսաստանի պետական անհետաձգելի պահանջներով թելադրված»[33] /ընդգծումը մերն է՝ Հ. Հ./: Մեր պատմագիտության մեջ տասնամյակների ամրապնդված տեսակետ է՝ Վ. Պոտտոյին և ռուսական պաշտոնական պատմագրության մյուս հեղինակներին վերագրել. «Կովկասյան պատերազմներում ցարիզմի հետապնդած ռազմա-քաղաքական և գաղութա-տիրական նպատակների մտացածին վարագուրումը»[34]: Ակնհայտ է, որ այդ տեսակետն ինքնին նորացման կարիք ունի:

Աշխատությունում Վ.Պոտտոն բավականին ուշագրավ և մանրամասն տեղեկություններ է հաղորդում հատկապես 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի մասին, որից այնքան առատորեն օգտվել են մեր շատ պատմաբաններ: Գիտական նույնարժեք նշանակություն ունեն նաև հեղինակի մյուս ուսումնասիրությունները,[35] որոնք՝ նույնպես քննարկված են ատենախոսությունում:

Հարցի առնչությամբ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ռուս պատմաբան Վ.Շչերբատովի «Գեներալ Ֆելդմարշալ իշխան Պասկևիչ»

[32] Տե՛ս, Потто В. А. Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, тт. I-IV, СПБ, 1886-1888

[33] Նույն տեղում, т. I, էջ III:

[34] Տե՛ս. Զ.Տ.Գրիգորյան, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը, Ե.,1978, էջ 11:

[35] Տե՛ս. В.А.Потто, Памяти старых кавказцев, СПБ, 1897, В.А. Потто, Генераль-адъютант Иван Давидович Лазарев, Тифлис, 1900, В.А. Потто, Первые доброволцы Карабага в эпоху водворения русского владычества, Тифлис, 1902.

Ընդհանուր գծերով ռուսական հրատարակություններում այսպես է ներկայացված Արևմտյան Հայաստանն ու հայկական հարցը, թեպետ հիմնահարցին նվիրված ուսումնասիրությունները դրանով չեն ավարտվում[46]:

Ատենախոսությունում առանձին քննարկման են արժանացել նաև հայկական հարցին նվիրված դարավերջի ռուսական երկու նշանավոր հրատարակությունները: Նրանցից առաջինը հրապարակ եկավ համիդյան կոտորածների տարում՝ 1895 թվականին. խոսքը «Հայերի դրությունը Թուրքիայում մինչ տերությունների միջամտությունը 1895թ.» ժողովածուի մասին է[47]: Գրքում զետեղված են ամենատարբեր ազգությունների պատկանող հեղինակների /Ռոլեն-Ժեկմեն, Գրին, Դիլլոն/ հրապարակումները, որոնք տարբեր տեսանկյունից ներկայացնում են հայկական հարցի մասին իրենց մոտեցումները: Այստեղ զետեղված է նաև հայ նշանավոր հրապարակախոս և պատմաբան Գր. Ջանշյանի «Հայկական հարցը Թուրքիայում» հոդվածը /ներկայացել է՝ Դիև անվամբ/, ուր հեղինակը խորհրդածում է նաև ազգային գաղափարախոսության շուրջ: Այդ գաղափարախոսության հիմքում Ջանշյանը դնում է հայոց եկեղեցուն: Հեղինակն ընդունում է հայ ազգային գաղափարախոսության մի կարևոր կողմ ևս. «Հայ ազգային գաղափարախոսությունն ի տարբերություն մյուս ժողովուրդների «մարտական» ձգտումների, - գրում է նա, - ունի լիովին խաղաղ և հստակ մշակութային ուղղվածություն: Եվ եթե ազգի գոյության համար անհրաժեշտ է հոգևոր բովանդակություն, ապա հայերը դրա պակասությունը չունեն»[48]: Մյուս ժողովածուն լույս տեսավ 1897թ.[49], որը ևս ամբողջովին արձագանքում էր 1894-1896թթ. Թուրքիայում տեղի ունեցած արևմտահայության կոտորածներին: Նրա հրատարակիչը նույն Գր. Ջանշյանն էր: Ատենախոսությունում քննության են առնված ժողովածուներում տեղ գտած պատմագիտական ուշագրավ հրապարակումները:

ԵՐԿՐՈՐԴ ԵՆԹԱԳԼԽՈՒՄ՝ «ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ» քննության է առնված դարի երկրորդ կեսին Ռուսաստանում գործունեություն ծավալած հայ հեղինակների հայագիտական ուսումնասիրությունները:

19-րդ դարի երկրորդ կեսին հայագիտության առաջընթացը Ռուսաստանում պայմանավորված չէր միայն ռուս հեղինակների աշխատություններով: Դարաշրջանը բեղմնավոր եղավ նաև Ռուսաստանի

[46] Տե՛ս. Малама Я.Д. Описание Эрзерумского вилаета., СПБ, 1874,Вронченко М.П.,Обозрение Малой Азии в нынешнем ее состояния., СПБ, 1838, Убичини М.А. Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях, СПБ, 1854, և ուրիշներ:

[47] Տե՛ս. Положение Армян в Турции до вмешательства держав в 1895г., М., 1895.

[48] Նույն տեղում, էջ 411:

[49] Տե՛ս. Братская помощь пострадавшим в Турции армянам., 2-е изд., М., 1898.

պատմագիտական դպրոցի հայ հեղինակների համար: Առաջընթացը նկատելի էր ինչպես թեմատիկայի հարստացման, այնպես էլ քննարկվող հարցերի գիտական խորության տեսակետից: Եվ եթե համեմատելու լինենք դարի առաջին և երկրորդ կեսի հայագիտական հրատարակությունները, ապա ժամանակի նշանավոր հայագետ Ք.Պատկանյանի հավաստումով՝ դարի առաջին կեսին պատկերն այսպիսին էր. «Տակավին դարի կեսերին, - գրում է նա, - բոլոր հայտնի հայ պատմիչների թիվը չէր անցնում 35-ից: Նրանցից հրատարակվել էին 24-ից ոչ ավելին: Միևնույն ժամանակ, այդ հրատարակություններից կեսից ավելին իրենց սակավաթիվության պատճառով անհասանելի էին ընթերցող լայն հասարակայնությանը և բնականաբար, ձեռագրերի տեսք ունեին: Ավելին, - շարունակում է նա, - նրանցից միայն 17-ն էին թարգմանվել ու հրատարակվել օտար լեզուներով»[50]:

Դարի երկրորդ կեսին, սակայն, հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը միանգամից փոխվում է: Պատմական բովանդակությամբ աշխատությունների թիվը սկսում է նկատելիորեն աճել: Հայ պատմիչների գործերն արագորեն թարգմանվում ու հրատարակվում են ոչ միայն Ռուսաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Այս աշխատանքներին զուգահեռ, լույս են տեսնում նաև հայ մատենագիրներին նվիրված առանձին ժողովածուներ, հրատարակվում են բազմաթիվ ու բազմաբնույթ հոդվածներ ու գրախոսականներ հայ պատմիչների գործերի մասին: Այդ ամենի արդյունքում՝ Ռուսաստանում ստեղծվեց հայ պատմական գրականություն՝ ոչ միայն հայերեն, այլև ռուս և եվրոպական լեզուներով: Դրանք արդեն հասանելի էին ոչ միայն գիտական շրջաններին, այլև հետաքրքրասեր լայն ընթերցողներին:

Այդ ամենից հետ չմնաց նաև Ռուսաստանը: Կայսրության մայրաքաղաքներ Պետերբուրգը և Մոսկվան , իսկ այնուհետև նաև Կազանը, Դորպատը, Թիֆլիսը դարձան հայագիտության նշանավոր կենտրոններ: Հայագիտական այդ կենտրոններում աճեցին և գիտական լայն ճանաչման արժանացան մի շարք անվանի հայ պատմաբան-հայագետներ: Նրանք ուսանել էին ռուսական նշանավոր համալսարաններում և անցել էին ռուս պատմագիտական առաջավոր դպրոցը: Եվ եթե դարասկզբին Ռուսաստանում հայ հեղինակները ներկայանում էին սակավ ուսումնասիրություններով, ապա դարի երկրորդ կեսին Ռուսաստանում խնդրին ձեռնամուխ եղան Ստ. Նազարյանցը, Մ. Էմինը, Ք. Պատկանյանը, Ալ. Երիցյանը, Կ. Եզյանը և ուրիշներ, որոնց աշխատությունների շնորհիվ նոր աստիճանի բարձրացվեց հայոց պատմության ուսումնասիրությունը:

Այս ամենի անխուսափելի արդյունքը եղավ այն, որ հնարավոր դարձավ ոչ միայն պարզաբանել արդեն պատմությանը հայտնի իրադարձություններ և փաստեր, այլև նորովի լուսաբանել ինչպես Հայաստանի և նրա հարևանների, այնպես էլ հայ-ռուսական հարաբերությունների պատմության շատ մանրամասներ ու դրվագներ: Հայոց պատմության հիմնահարցերի կողքին, որպիսիք էին Հայկյան և Արշակունյաց արքայատոհմերի, Պարսկաստանի և Բյուզանդիայի հետ ունեցած հարաբերությունների պատմությունը, հայ պատմաբանների ուսումնասիրության

[50] Տե՛ս. Библиографический очерк армянской литературы К.П. Патканова., М., 1879.

թեմա դարձավ նաև հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը վերաբերող հարցերը: Եվ այնուհանդերձ, 19-րդ դարի երկրորդ կեսի հայ հեղինակների գործերում տիրապետող էր Հին Հայաստանի պատմությանը վերաբերող հարցերի քննությունը, նրա հերոսական դրվագների ներկայացումը:

Ռուսաստանում հայ հեղինակների կողմից ստեղծված ուշագրավ այդ գրականության ուսումնասիրությունն էլ հենց կազմում է ատենախոսության այս հատվածի հիմնական բովանդակությունը:

Ստ. Նազարյանցը հայագիտության մեջ բավականին հանգամանալից ուսումնասիրված հեղինակներից է: Հրապարակի վրա են արժեքավոր մի շարք մենագրություններ, որոնք որոշակիորեն ամբողջացնում են 19-րդ դարի հայ նշանավոր գործչի հասարակական-քաղաքական և լուսավորչական գործունեությունը[51]: Սակայն, սխալ կլիներ կարծել, թե Ստ. Նազարյանցի հայագիտական ժառանգության ուսումնասիրությունը ըստ ամենայնի ավարտված է, մասնավորապես, եթե խոսքը վերաբերում է նրա պատմագիտական հրապարակումների լուսաբանմանը:

Թեև մի քանի հոդվածներից բացի, Ստ. Նազարյանցը հատկապես պատմագիտական բնույթի որևէ աշխատություն չունի, սակայն պատմության և պատմագիտության խնդիրները տևապես հուզել և հետաքրքրել են նրան: Պատմության ճանաչողությանը նա տալիս էր հանգուցային նշանակություն. «Ամեն ազգ, թե նորա պարծանքը և թե նորա ամոթը,- գրում է նա,- հետևանք է նրա պատմութեան, ասել է այն գործերի ու անցքերի, որ եղած են ազգի կյանքի մեջ և այսպես ով որ կամի ծանոթանալ յուր ազգի որպիսությանը, պարտական է ուսանել դորա պատմությունը, դորա անցյալը, որի մեջ դրած է և յուր հատուկ ներկայի բանալին, այսինքն, հասկանալով անցած գնացածը, կարող է հասկանալ նա և ներկայի խորհուրդը...»[52]: Գրեթե բոլոր և հատկապես հրապարակախոսական բնույթի աշխատություններում հստակորեն ուրվագծվում է Նազարյանցի պատմական մտածողությունը: Սեփական ժողովրդի պատմության իմացությունը Նազարյանցը դիտում է ոչ թե սոսկ որպես գիտելիքների իմացություն և պատմական անցքերի մասին տեղյակություն, այլ նրանում տեսնում է ներկայի և ապագայի խորհուրդը, գործունեության ուղեցույց:

Ատենախոսությունում քննարկվում են Ս. Նազարյանցի հայոց պատմության հարցերին նվիրված հոդվածներն ու հրապարակումները, առանձնացվում են նրանցում եղած պատմագիտական կարևոր ընդգծումները:

Եվ այնուհանդերձ, 19-րդ դարի երկրորդ կեսին հայոց պատմության հիմնահարցերը գիտական լուրջ մշակման ու նոր մոտեցման կարիք ունեին: Հայ պատմագիտության մեջ գոյություն ունեցող այդ բացը լրացնելը դարձել էր հրատապ անհրաժեշտություն: Հենց այդ ժամանակ էլ Ռուսաստանում հրապարակ եկան երկու նշանավոր հայագետներ, որոնց վիճակված էր

---

[51] Տե՛ս. Սմ.Շահազիզ. Հրապարակախոս ձայն. Մոսկվա, 1881, Լեո. Ստեփանոս Նազարյան. Թիֆլիս. 1902, Մ.Մխիթարյան. «Հյուսիսափայլ» ամսագիրը. Երևան, 1958, Ռ. Կարապետյան. Ստ. Նազարյանց: Փիլիսոփայական հայացքները , Երևան, 1976, Ռ.ՆանումյանՍտ.Նազարյանց,Երևան,1978 և ուրիշներ:

[52] Ստ.Նազարյանց, Երկեր, Թիֆլիս, 1913, էջ 40:

առաջընթաց խոշոր քայլ կատարելու այդ կարևոր բնագավառում: Նրանցից առաջինը հայագիտության երախտավոր Մկրտիչ Էմինն էր:

Չնայած նախորդ դարի համեմատությամբ 19-րդ դարի առաջին կեսին հայագիտական աշխատանքներն աշխուժացան, սակայն դրանք դեռևս հեռու էր բավարար համարվելուց: Նրանցում բացակայում էր ամենագլխավորը՝ մշակված և համակարգված չէին հայոց պատմության ուսումնասիրության գիտական մեթոդները, մի պահանջ, որը վաղուց արդեն իրականացված էր եվրոպական և ռուսական պատմագիտության կողմից: Այստեղից էլ Մ. Էմինի ծառայությունը հայագիտությանը: Նա առաջինն էր, որ իր հետազոտությունները ներկայացրեց ժամանակի գիտական նոր մեթոդների համակարգի մեջ, համապատասխանեցրեց դրանք այդ կանոններին: Ուստի դրանում պետք է տեսնել այն իրողությունը, որ նրա աշխատությունները գիտական ճանաչում ստացան ոչ միայն Ռուսաստանում, այլև նրա սահմաններից դուրս:

Մ. Էմինը հայագիտական բազում և բազմաբնույթ ուսումնասիրությունների հեղինակ է, որոնք նվիրված էին հայոց դիցաբանության, հնագիտության, պատմության, գրականության և մատենագիտության հարցերին: Անշուշտ, նրա գիտական գործունեության հիմնական ասպարեզը պատմագիտությունն էր, որին էլ նվիրեց իր աշխատությունների զգալի մասը[53]: Դրանք առաջին հերթին թարգմանություններ են, հայ նշանավոր պատմիչների աշխատությունների հրատարակություններ և պատմա-քննական բնույթի ուսումնասիրություններ: Էմինի ջանքերի շնորհիվ հայկական հարուստ մատենագրությունը մատչելի դարձավ ռուս և եվրոպական գիտական աշխարհին: Մի ազնիվ առաքելություն, որն Էմինը կատարեց նվիրումով ու գիտական բարեխղճությամբ:

Հայագիտության մեջ Մկրտիչ Էմինի արժանավոր հետնորդն ու նրա գործի շարունակողը Քերովբե Պատկանյանն էր, որի հայագիտական գործունեության ամենից ընդարձակ բնագավառը կրկին պատմագիտական ուսումնասիրություններն են[54]: Նրա կողմից հրատարակված պատմական բազմաբնույթ գրականությունը՝ թարգմանություններն ու հետազոտությունները նպատակ ունեին սրբագրել և մատչելի դարձնել հայ պատմիչների կողմից հաղորդած այն տեղեկությունները՝ /հինգերորդ դարից սկսած մինչև 17-18-րդ դ./, որոնք վերաբերում էին հայերի հետ դարերի ընթացքում առընչվող ժողովուրդների պատմությանը /Սեբեոս /1862 թ./, Ղևոնդ, Մովսես Կաղանկատվեցի /1861թ./, Մխիթար Այրիվանեցի / 1867թ./, Մաղաքիա պատմիչ /1871թ./, Անանիա Շիրակացի /1877թ./, Մխիթար Անեցի /1879թ./, Փավստոս Բուզանդ /1883թ./, հատվածներ հայոց պատմությունից /1884թ./, Թովմա Արծրունի /1887թ./ և այլն: Այդ հրատարակությունները Ք.Պատկանյանը

---

[53] Տե՛ս. Исследования и статьи Н. О. Эмина по армянской мифологии, археологии, истории и литературы /за 18581884г./,М., 1898, Մ. Էմին. Երկասիրություններ հայոց լեզվի, գրականության և պատմության մասին /1840-1855թթ./, Մոսկվա, 1858թ:

[54] Տե՛ս. К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, СПБ., 1881, К. Патканов, Библиографический очерк армянской исторической литературы, СПБ., 1880.

լրացրեց հայ պատմիչների մասին արժեքավոր ներածականներով:

Փաստորեն Պատկանյանն այդ հարցում մի քայլ առաջ գնաց իր ուսուցչից. եթե Էմինի համար կարևորություն էին ներկայացնում հայ այն պատմիչները, որոնք հայոց պատմությունը շարադրել էին հարևան երկրների պատմության հետ շաղկապված, ապա նա նպատակ դրեց ստուգաբանել ու ճշգրտել այդ տեղեկությունները: Դրանով իսկ Պատկանյանը հայագիտությունը հարստացրեց նոր բովանդակությամբ. նա հայոց պատմությունը չդիտեց միայն տեղական նշանակության իրադարձությունների շրջանակներում, այլ դրանք քննարկեց տարածաշրջանի իրադարձությունների հետնախորքի վրա: Մի հանգամանք, որն առավել գնահատելի էր և ընդունելի եվրոպական և ռուսական պատմագիտական շրջանակներում:

Կ. **Եզյանի պատմագիտական ժառանգությունը**: Եզյանը մեր պատմագիտության մեջ քիչ ուսումնասիրված հեղինակներից է: Հայագիտության մեջ Կ. Եզյանի առաջին ուսումնասիրությունը «Հին Հայաստանի ներքին կյանքը» աշխատությունն էր, ուր հեղինակը քննարկում է հին Հայաստանի պատմությանը վերաբերող կարևոր շատ հարցեր[55]:

Եզյանն իր դարաշրջանի հզոր անհատականություններից էր. չկար ժամանակի առավել կամ պակաս հուզող հարց, որը նրա կողմից հատուկ ուսումնասիրության չարժանանար: Իսկ ժամանակի հրատապ հարցերից մեկը հայ եկեղեցու միասնականության խնդիրն էր, որին Կ. Եզյանը նվիրեց երկու ուշագրավ ուսումնասիրություններ[56]:

Կ. Եզյանը միաժամանակ գիտության կազմակերպիչ էր: Լինելով արդեն երկու ուշագրավ առաջաբանների հեղինակ, նա շարունակում էր հայագիտական բեղուն գործունեություն ծավալել: Նրա ուշագրավ հրատարակություններից է «Ս. Էջմիածնի Մայր աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը» աշխատությունը, որտեղ հեղինակը պատմական ակնարկի տեսքով ցույց է տալիս հայոց Մայր աթոռի և Ռուսաստանի կառավարության հարաբերությունները Եկատերինա Բ կայսրուհու ժամանակներից սկսած[57]:

19-րդ դարի վերջին սկսվում է Եզյանի հայագիտական գործունեության առավել հասուն և արգասավոր շրջանը: Այդ ընթացքում լուրջ տեղաշարժեր էին կատարվել հայագիտության բնագավառում, ի հայտ էին եկել պատմագիտական նոր ուսումնասիրություններ: Եզյանը ձեռնամուխ է լինում տասնամյակների մտորումներն ու մտահղացումները ընդհանրացնելու խնդրի իրականացմանը: Հենվելով աղբյուրագիտական հարուստ նյութի վրա, նա ստեղծում է իր որակի մեջ նոր ու արժեքավոր աշխատություն: 1898թ. Պետերբուրգում լույս տեսավ Կ. Եզյանի «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ» ծանրակշիռ ուսումնասիրությունը[58]:

---

[55] Տե՛ս., Г.Эзов, Внутренный быт древней Армении, СПБ, 1859.

[56] Տե՛ս. Կ.Եզյան, Բռնի միութիւն հայոց Լեհաստանի ընդ եկեղեցիոյն հռովմայ, Ս.Պետերբուրգ,1884 Կ.Եզյան Հովհաննես Դարդելի ժամանակագրություն հայոց, Ս.Պետերբուրգ, 1891

[57] Տե՛ս. Կ.Եզյանց, Ս.Էջմիածնի Մայր աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը, Թիֆլիս, 1904:

[58] Տե՛ս. Г.Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПБ, 1898:

Աշխատության առաջին մասը Եզյանի ընդարձակ ներածական-ուսումնասիրությունն է՝ «Ակնարկ Ռուսաստանի կառավարության և հայ ժողովրդի հարաբերությունների մասին» խորագրով: Հրատարակությանն անծանոթ ընթերցողին կարող է թվալ, թե բնագրերին կցված են մեր ներկա հասկացությամբ սովորական ներածական և ծանոթագրություններ: Իրականում, Եզյանի ներածությունը զբաղեցնում է գրքի կարևոր մասը և փաստորեն ծավալուն ուսումնասիրություն է:

Պատմագիտական առումով առավել արժեքավոր է Եզյանի կապիտական արշավանքին, 19-րդ դարի առաջին երեսնամյակում տեղի ունեցած կովկասյան պատերազմներին պատմությանը նվիրված բաժինները: Իր գրքի վերջին բաժինը Եզյանը նվիրել է արևմտահայության հիմնախնդրին, քննարկել 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքները: Այստեղ էլ հատակվում է Եզյանի պատմագիտական լայն ընդգրկումը: Լինելով ամբողջովին արևելահայ իրականության ծնունդ, Եզյանի ուշադրությունից չվրիպեցին նաև համահայկական խնդիրները՝ Արևմտյան Հայաստանն իր դժվարին ու դրամատիկ կյանքով:

Կարապետ Եզյանի գիրքը ժամանակին լույս տեսավ: Այն ժամանակ, երբ դարավերջին ռուսական մամուլում հակահայկական հոդվածներ էին հրապարակվում, Եզյանի աշխատությունն իր անաչառ վավերագրերով հավուր պատշաճի պատասխան էր այդ կեղծ ու խեղաթյուրված հրապարակումներին:

ԵՐԲՈՐԴ ԳԼԽՈՒՄ՝ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ»

քննության է առնված ռուսական մամուլի Հայաստանին և հայոց պատմությանը նվիրված հրապարակումները:

Ինչպես հայտնի է, 18-րդ դարի վերջերից Անդրկովկասը, այդ թվում և Հայաստանը հայտնվեց Ռուսաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթ ծրագրերում: Ռուսաստանում աճեց հետաքրքրությունը տարածաշրջանի նկատմամբ: Արևելյան շուկաները դուրս գալու և Անդրկովկասում ամրանալու իր քաղաքականությունը իրականացնելու գործում, ինչ խոսք, Ռուսաստանի համար լավագույն դաշնակիցը հայերն էին: Առաջին հերթին դա պայմանավորված էր հայերի ընդգծված ռուսական կողմնորոշմամբ, ինչպես նաև Թուրքիայի ու Պարսկաստանի լծից ազատագրվելու և հանձին Ռուսաստանի կայուն դաշնակից ունենալու հանգամանքով: Այլ խոսքով՝ ռուսական կայսրության ռազմաքաղաքական ծրագրերը համընկնում էին հայ ազատագրական շարժման ձգտումներին: Այդ պատճառով էլ Ռուսաստանում գնալով աճում էր հետաքրքրությունը իր դաշնակցի՝ Հայաստանի ու հայ ժողովրդի, նրա հարուստ պատմության նկատմամբ: Ուստի ինչպես մինչ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացումը, այնպես էլ պատմական այդ իրադարձությունից հետո, 19-րդ դարի ռուսական մամուլը առատ է Հայաստանի մասին նյութերով:

Ներկայացնելով հայոց պատմությանը վերաբերող հիմնական հրապարակումները, մենք առավելապես հետամուտ ենք եղել երկու կարևոր հանգամանքի. նախ, թե ինչ չափերով և որ գլխավորն է, ինչ խորությամբ են լուսաբանվել հայոց պատմության հիմնահարցերը: Եվ երկրորդ, ջանացել ենք դիտարկել, թե հայագիտության համար ինչպիսի արժեք են ներկայացնում այդ հրապարակումները:

Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ ռուսական այդքան հարուստ ու բազմաբանակ պարբերականների առկայության պայմաններում հնարավոր չէ անդրադառնալ հայոց պատմությանը նվիրված բոլոր հրապարակումներին: Ուստի մենք առավելապես անդրադարձել ենք ռուսական մամուլում զետեղված այն հրապարակումներին, որոնք բնութագրում և ամբողջական են դարձնում հայագիտական նյութերի հիմնական թեմատիկան: Այդ իմաստով, առանձնակի ու մանրամասն ուսումնասիրել ենք հատկապես պատմական ուղղվածություն ունեցող ռուսական պարբերականները:

Հարցի լուսաբանումը դյուրացնելու նպատակով բազմաբնույթ ու բազմաբանակ այդ նյութերը ատենախոսությունում դասվել են առանձին թեմատիկ խումբ-հարցերի:

Նյութերի առաջին թեմատիկ խումբը վերաբերում է զուտ պատմական բնույթի հրապարակումներին: Դրանք ռուսական մամուլում զետեղված այն հոդվածներն են, որոնցում արծարծվում են հայոց պատմության ամենատարբեր հարցերը: Ճիշտ է, դարասկիզբը հայոց պատմության նյութերի ընդգրկման իմաստով այնքան էլ հարուստ չէ, այնուհանդերձ ռուսական մամուլում կարելի է հանդիպել այդ բնույթի ուշագրավ հրապարակումների: Ռուսական մամուլում զետեղված հայագիտական նյութերի մի մասն էլ վերաբերում են Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերին: Բազմաթիվ հոդվածներ նվիրված են հայ եկեղեցուն և նրա պատմությանը: Դրանք հիմնականում հանրամատչելի բնույթի հրապարակումներ են, որոնք ռուս ընթերցողին ծանոթացնում են հայ եկեղեցու կանոնների և կյանքի հետ: Այդ բնույթի հետաքրքիր հոդվածներ են զետեղված հատկապես «ЖМВД» ամսագրում և վերնագրված է «Հայ գրիգորյանական եկեղեցին» խորագրով[59]: Հայագիտական հոդվածների մի մասն էլ նկարագրական բնույթի են:

Մեզ հետաքրքրող հարցի թեմատիկ մյուս խումբը ներկայացնում են ռուսական պարբերականներում տեղ գտած այն հրապարակումները, որոնք գրի են առնված նոթերի և ռազմական հուշագրությունների տեսքով: Դրանք ռուսական մամուլում ամենից հաճախ հանդիպող հրապարակումներ են և իրենց բովանդակությամբ ու նյութերի ընդգրկմամբ ամենից հարուստն են: 19-րդ դարն այդ առումով առանձնանում է, քանի որ Հայաստանը դարձավ ինչպես ռուս-պարսկական, իսկ ավելի հաճախ նաև ռուս-թուրքական պատերազմների թատերաբեմ: Ռուսական մամուլում զետեղված են այդ պատերազմների մասնակիցների հուշերը, որոնցում ականատեսների ձևով շոշափվում է նաև հայոց պատմությանն ու Հայաստանին վերաբերող հարցեր: Դրանք առաջին հերթին ռուս սպաների այս կամ այն հաջողված ռազմական գործողության նկարագրումն ու փառաբանումն է: Հուշագրություններում զգալի թիվ են կազմում ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմներին վերաբերող հրապարակումները: Այս առումով իրեն հավասարը չունի Կովկասին քաջածանոթ, Նիկոլայ Նիկոլաևիչ Մուրավյով-Կարսկու հուշերը[60]: Դրանք ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ և աչքի են ընկնում առաջին հերթին իրենց հավաստիությամբ: Այս ամենից հետո ուղղակի անհասկանալի է, թե ինչպես է, որ մեր պատմաբանների ուշադրությունից դուրս է մնացել

[59] Տես՝ Журнал МВД, 1843, N 3.
[60] Տես՝ "Русский архив": 1886, N 1, 1881, N 11 և այլն:

պատմագիտական կարևոր այնպիսի մի բնագավառ, ինչպիսին հուշագրություններն են: Ավելին՝ ռուսական մամուլի ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզման, որ հայոց պատմությանը վերաբերող հրապարակումների մեջ առավել առատ ու ավելի գնահատելին հուշագրություններն են, քան նրան նվիրված առանձին հոդվածները: Այս առումով Ն. Մուրավյովի նոթերը փոքրիկ դիպվածքներ նկարագրող հուշեր չեն միայն, այլև ունեն ժամանակաշրջանը և իրադարձությունները բնութագրող պատմական տեղեկատվության բնույթ :

Ռուսական մամուլի էջերում բավականին մեծ թիվ են կազմում նաև ռուսական բանակի և պետական հայազգի նշանավոր գործիչներին /Մ. Լորիս-Մելիքով, Վ. Բեհբութով, Վ. Մնդաթով, Մ. Արղության -Երկայնաբազուկ և ուրիշներ/ նվիրված հրապարակումները: Որպես կանոն, այդ հրապարակումներում բարձր են գնահատվում նրանց ռազմական և պետական ծառայությունները: Այդպիսի հոդվածների կարելի է հանդիպել ռուսական ամենատարբեր ամսագրերում:

Եվ, վերջապես, առավել կարևորություն են ներկայացնում ռուսական պարբերականներում զետեղված այն հրապարակումները, որոնք վերաբերում են տարածաշրջանում Ռուսաստանի քաղաքականության բնորոշմանը, և որ ամենից կարևորն է՝ արևմտահայության հիմնահարցի լուսաբանմանը: Այդ բնույթի հրապարակումները ատենախոսությունում նույնպես ներկայացված են առանձին բաժնով:

Հարցը բնականաբար հավասարապես հուզում էր եվրոպական տերություններին, իսկ Ռուսաստանին առանձնապես: Ուստի խնդրի առնչությամբ՝ որոշ հրապարակումներում մանրամասն ու հանգամանորեն, որոշ տեղերում համառոտ ու հպանցիկ անդրադարձ էր կատարվում Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության հիմնահարցին: Այդպիսի հրապարակումներ ռուսական մամուլում հայտնվեցին Բեռլինի վեհաժողովից անմիջապես հետո, երբ դեռ ռուսների մոտ թարմ էր պատերազմում տարած իրենց հաղթանակների, իսկ առավել ևս դիվանագիտական դաշտում կրած պարտության տպավորությունը: Ռուսական մամուլի շատ օրգաններ անդրադարձան Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանությունների կողմից սանձազերծած հայկական կոտորածներին: Սակայն «Вестник Европы»-ն այդ հարցում ցուցաբերեց հայ ժողովրդի ցավն ու տառապանքն ըմբռնելու բացառիկ կարողություն: Այդ են հաստատում ամսագրում տպագրված հոդվածները:[61]:

Հայկական կոտորածներին անդրադարձավ և թուրքական իշխանություններին խստորեն դատապարտեց նաև «Русская мысль», ամսագիրը: Բավականին ուշագրավ հոդված է զետեղված ամսագրի 1896թ. վերջին երկու համարներում՝ «Եվրոպան և Թուրքիան հայկական հարցում» վերնագրով: Հեղինակը ճիշտ է նկատում, որ հաշտվելով եվրոպական ցամաքում իր տարածքների կորստյան հետ, թուրքերն ամուր կառչեցին իրենց ասիական տիրույթներից և եթե եվրոպական մասում «նրանց ոտքի տակի հողը գնաց, ապա ասիական մասում նրանք որոշել էին ցուցադրել իրենց վայրագ ողջ

[61] Տես. «Вестник Европы», 1895, N 7, էջ 372-373:

հզորությունը»[62]: Իսկ Եվրոպա՞ն, հարցնում է հեղինակը և պատասխանում. «Թուրքիան նույնիսկ այս վիճակով հարկավոր է Եվրոպային: Դժվար չէ նկատել, որ ինքը՝ Եվրոպան, միջոցներ չի խնայում հենասյուներ դնելու Օսմանյան կայսրության խարխուլ հիմքերը ամրացնելու համար...»[63]: Հեղինակը միաժամանակ նշում է, որ «համաեվրոպական քաղաքականության տեսանկյունից, դարի հրատապ հարցերի կողքին, հայկական հարցն այնքան փոքր է երևում, որ իմաստուն դիվանագետը առանց ժպիտի չի կարող խոսել նրա մասին»[64]:

Հայկական հարցի մասին բավականին ուշագրավ հոդվածներ են զետեղված նաև «Մշակ» թերթում, որոնք արտատպված էին ռուսական պարբերականներից: Հարկ է նշել, որ «Մշակն» իր էջերում բազմիցս արձագանքել է Հայաստանին նվիրված ռուսական մամուլի հրապարակումներին, երբեմն էլ ամբողջովին արտատպել ուշադրության արժան հրապարակումները: Որպես կանոն, բաժինը վարում էր խմբագիր Գր. Արծրունին:

Ռուսական պարբերականների ուսումնասիրությունը մեզ բերում է նաև այն համոզման, որ արևելյան հարցի մասին հրապարակումներն ու խորհրդածությունները որպես կանոն, երևան էին գալիս կամ ռուս-թուրքական պատերազմի նախօրեին կամ էլ՝ բուն պատերազմի տարիներին: Այսինքն այն ժամանակ, երբ բնականաբար, կրկին հրապարակ են գալիս Թուրքիայի տիրապետության տակ հեծող ազգությունների իրավիճակի հարցերը: Այդ առումով հետաքրքիր հոդվածաշար է տպագրել «Русская старина» ամսագիրը[65]:

Իհարկե, ռուսական մամուլում ամենուր չէ, որ հանդիպում ենք հայանպաստ հոդվածների ու հրապարակումների: Նրանց կողքին, անշուշտ, կան նաև այնպիսիները, որոնց վրա ցարիզմի զաղութային քաղաքականության կնիքն է, նկատվում է քննարկված հարցերի նկատմամբ միակողմանություն և փաստերի խեղաթյուրում: Այդպիսին են օրինակ, Կ. Բորոզդինի հրապարակումները[66]:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ 19-րդ դարի ռուսական մամուլը մեզանում հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձել, թեպետ նրա առանձին հրապարակումներ տեղ են գտել հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը նվիրված ուսումնասիրություններում **Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն Ո Ւ Մ** հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական դրույթները, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

- Բարձր գնահատելով հայ պատմաբանների կողմից կատարված աշխատանքը, որի շնորհիվ ստեղծվեց հայ-ռուսական հարաբերությունների պատմության գիտական հարուստ գրականություն, այնուհանդերձ, պետք է նշել,

---

[62] Տես «Русская мысль»,1896, N 11, էջ 109:

[63] Նույն տեղում:

[64] Նույն տեղում, էջ 110:

[65] Տես. «Русская старина», 1876, N 10:

[66] Տես՝ "Русский вестник", 1891, "Наблюдатель", 1885, N 5.

որ այդ պատմությանը վերաբերվող ոչ բոլոր բնագավառներն են հավասարաչափ ուսումնասիրվել: Ասվածը հատկապես վերաբերում է հայագիտական հարցերի ուսումնասիրությանը: Այս իմաստով, խնդրո առարկա հարցը պատմագիտական առումով մեզանում հիմնարար ուսումնասիրության չի ենթարկվել: Բացակայում է նաև Ռուսաստանում հայագիտական ռուսական դպրոցի ամբողջական պատմության ուսումնասիրությունը:

- Մինչ օրս լույս տեսած պատմագիտական գրականության մեջ ռուս և հայ պատմաբանները քննարկվել ու ուսումնասիրվել են այնքանով միայն, որքանով հետաքրքրություն են ներկայացրել և առնչվել իրենց թեմաներին, հատկապես երբ հարցը վերաբերել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացմանը: Ընդ որում, որպես կանոն, ռուս պատմագիտական միտքը ներկայացվել ու քննարկվել է միևնույն հայեցակետային ելակետերից և միայն ընդհանուր գծերով: Ավելին, նրանց միջև տարբերակում չի դրվել: Մինչդեռ, թեպետև նրանց ուսումնասիրություններում առկա են մոտեցումների ու տեսակետների որոշ նմանություն, այնուհանդերձ, նրանցից յուրաքանչյուրի գիտական ժառանգության մեջ կան բազում տարբերություններ, ինչն ավելի անհրաժեշտ է դարձնում նրանց պատմագիտական ժառանգության նկատմամբ հետաքրքրությունը:

- 19-րդ դարում Ռուսաստանում հրատարակված հայագիտական ուսումնասիրություններում պարունակող ընդհանրացումներն ու փաստական հարուստ նյութը մեծապես օգնում են հայոց պատմության ռառանձին հարցեր և իրադարձություններ նորովի մեկնաբանելու խնդրում: Դրանումն է կայանում ներկա ուսումնասիրության գլխավոր խնդիրը. որքանով է այդ գրականությունն օգնում հայոց պատմության առանձին հարցերի ուսումնասիրությանը: Քննարկելով 19-րդ դարի հայագիտությանը վերաբերող գրականությունը, ավելի ամբողջական ու առարկայական է դառնում Ռուսաստանում նրա զարգացման միտումները:

- 19-րդ դարի առաջին կեսին կովկասյան տարածաշրջանը նախկինի պես շարունակում էր մնալ ռուս հետազոտողների ուշադրության ոլորտում: Ավելին, Ռուսաստանում գնալով նկատելի էր դառնում տեղի ժողովուրդների պատմության հանդեպ հետաքրքրությունը, որն առաջին հերթին թելադրված էր երկրամասում իր դիրքերն ամրապնդելու անհրաժեշտությամբ: Պատմագիտական նյութերն այստեղ քննարկվում էին տեղի ժողովուրդների կենսապայմանների, աշխարհագրական միջավայրի, տնտեսությանը վերաբերող հարցերին զուգահեռ:

- Դարի առաջին կեսի հայագիտական հետազոտությունները գիտականության տեսակետից անհամեմատ սահմանափակ վերլուծություններ էին և աչքի չէին ընկնում հայագիտական հստակ հարցադրումներով ու մեկնաբանություններով: Ուսումնասիրությունների զգալի մասը սոսկ նկարագրական բնույթ էին կրում: Բավականին սահմանափակ էր նաև հայագիտական հարցերով զբաղվողների թիվը: Ուստի հայագիտական ծանրակշիռ հետազոտությունների մասին այդ ժամանակաշրջանում դեռևս խոսք լինել չէր կարող: Մյուս կողմից սակայն, հայագիտական ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռուս հեղինակներն աշխատում էին հաղթահարել նախորդ ժամանակաշրջանների

ճանապարհորդական - ճանաչողական նոթերի մտայնությունը, ձգտում էին հարցերին մոտենալ պատմական զարգացման տեսանկյունից:

- 19-րդ դարի առաջին կեսին Ռուսաստանում հայագիտական արդյունավետ գործունեություն ծավալեցին նաև ռուսական դպրոցն անցած հայ հեղինակները: Նրանց աշխատանքներին առաջին հերթին բնորոշ էր հայոց պատմության պատմա-քննական վերլուծությունը, նկատելի էր նաև աղբյուրների ու գրականության անհամեմատ լավ իմացությունը: Ի տարբերություն նույն ժամանակի ռուս հետազոտողների, հայ հեղինակներն ունեին աղբյուրագիտական որոշակի պատրաստվածություն: Եվ թեպետ 19-րդ դարի սկզբի հայ հեղինակների հայագիտական հետազոտությունների մի մասը նկարագրական բնույթի գործեր էին, սակայն միաժամանակ փորձեր կատարվեցին հայոց պատմությունը քննական տեսքով ներկայացնելու համար:

- Հատկանշական է, որ եթե դարասկզբի ռուս հեղինակները հայոց պատմությանն անդրադառնում էին ամենից առաջ Ռուսաստանի ռազմա-քաղաքական նպատակների ու շահերի տեսանկյունից, ապա հայ հեղինակներն իրենց խնդիրը տեսնում էին Հայաստանի պատմական հարուստ անցյալի հերոսական էջերը ռուս ընթերցողին ներկայացնելու մեջ: Շեշտը դրվում էր հայոց պետականության պատմության, Առաջավոր Ասիայի քաղաքական իրադարձություններում նրա խաղացած որոշակի դերի վրա:

- 19-րդ դարի երկրորդ կեսին հայագիտությունը Ռուսաստանում զգալի առաջընթաց ապրեց: Նկատելիորեն աշխուժացան այդ ուղղությամբ տարվող աշխատանքները, որոնք առանձնանում էին թե իրենց ծավալով և թե գիտական խորությամբ:: Հատկանշական էր նաև, որ ռուս ուսումնասիրողներն արդեն բավականին քաջատեղյակ էին Հայաստանի պատմական անցյալին և ունեին աղբյուրագիտական բավարար պատրաստություն:

- 19-րդ դարի երկրորդ կեսի հայագիտական ուսումնասիրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ռուս հեղինակներն առաջին հերթին փորձում էին բացահայտել Հայաստանի պատմական զարգացումը, անդրադառնալ հասարակական տնտեսական կյանքի, հարևան ժողովուրդների հետ ունեցած հարաբերությունների, մշակույթի հարցերին: Զգալիորեն ընդարձակվեց նաև հայագիտական ուսումնասիրությունների թեմատիկան: Հին Հայաստանի, հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցերի կողքին, ուսումնասիրության նոր թեմա է դառնում արևմտահայության իրավիճակն ու հայկական հարցը:

- 19-րդ դարի երկրորդ կեսին հայոց պատմության հիմնահարցերը համակողմանի և մանրամասն ուսումնասիրության արժանացան նաև Ռուսաստանում հայագիտական գործունեություն ծավալած հայազգի հեղինակների կողմից: Նրանց հետազոտությունների արդյունքում Ռուսաստանում ամբողջական դարձավ հայոց պատմության ուսումնասիրությունը: Նշելով հայկական աղբյուրների համաշխարհային նշանակությունը, հայ հեղինակները ռուս և օտար գիտական հասարակայնությանը հասցրին այն կարևոր միտքը, որ հայկական աղբյուրներից կարելի է ուշագրավ տեղեկություններ ստանալ Առաջավոր Ասիայի պատմության մասին: Հայազգի հեղինակների ուսումնասիրությունների շնորհիվ Ռուսաստանում ստեղծվեցին հայագիտական հետազոտությունների նոր կենտրոններ, որոնք կանխորոշեցին նրա հետագա զարգացումը:

- 19-րդ դարի ռուսական մամուլում քիչ չեն Հայաստանի ու հայերի, հատկապես հայկական հարցի հետ առնչվող հրապարակումները: Դարաշրջանի ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմները, արևմտահայության դրամատիկ իրավիճակն ու կոտորածները, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարցերը լայնորեն լուսաբանվել են ռուսական պարբերական մամուլում: Զուտ պատմագիտական իմաստով, առավել ևս ժամանակի առումով այդ հրապարակումներն, անշուշտ, արժանի են գնահատության: Նրանցից յուրաքանչյուրն իր որոշակի դրական նպաստը բերեց հայ ժողովրդի մասին հասարակական կարծիքի ու տրամադրությունների ձևավորման խնդրում:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ աշխատանքներում.

1. Հայոց պատմության հիմնահարցերը 19-րդ դարի ռուսական մամուլի հրապարակումներում: Մենագրություն, Երևան, 1998:
2. Կ.Եղյանի պատմագիտական ժառանգության գնահատման հարցի շուրջ: «Պատմաբանասիրական հանդես », 1998, N 1-2, էջ 95-105:
3. Մի էջ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման պատմությունից /Երևանյան առաջին արշավանքը ականատեսի նկարագրությամբ/: «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1998, N 1, էջ 128-138:
4. Գիրքը դարի խորքից. «Եղբայրական օգնությունը....» 100 տարեկան է: «Պայքար » ամսագիր, 1998, N 1, էջ 57-64:
5. Քերովբե Պատկանյանի պատմագիտական ժառանգության շուրջ: «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1999, N 1, էջ 86-92
6. Ի.Շոպենի պատմագիտական ժառանգության գնահատության հարցի շուրջ: «Բանբեր Երևանի համալսարանի », 1999, N 1, էջ 142-146
7. «Ռուսկի արխիվ» և «Ռուսկայա ստարինա» հանդեսները Հայաստանի 19-րդ դարի առաջին կեսի ռազմաքաղաքական դրության մասին: «Պատմաբանասիրական հանդես », 1999, N 2-3

ОГАНЕСЯН АЙКАЗ ЖОРАЕВИЧ

Историческая наука в России в XIX веке. / Арменоведение / Диссертация на соискание ученой степени доктора исторических наук

По специальности 07. 00. 01- История Армянского народа

Защита состоится 28 декабря 1999г. в 12^{00} часов по адресу ул.Баграмяна 24 г на специализированном совете Института истории НАН РА.

РЕЗЮМЕ

На переломных этапах истории Армении, когда вопрос политической ориентации страны приобретает решающее значение, возникает необходимость оценки пройденного пути, осмысления уроков истории. Естественно, исторические события последних веков наводят нас на размышления об общности политических интересов и целей армянского и русского народов, интересов Армении и России в целом.

В диссертации впервые делается попытка представить и обобщить созданную в XIXв. в России арменоведческую историческую литературу, тенденции и направления ее развития. Высоко оценивая работу армянских историков, в результате которой была создана богатая научная литература по истории армяно-русских отношений, тем не менее следует отметить, что данная проблема не стала предметом специального исследования.

Настоящая диссертация посвящена изучению различных аспектов данной темы, что нашло отражение в ее введении, трех главах и заключении.

Во введении - обоснованы актуальность проблемы, ее научная новизна и практическое значение, определены ее цели и задачи, степень изученности рассматриваемой проблемы.

В первой главе - "Арменоведение в России в первой половине XIXв." Рассматриваются тенденции развития арменоведения в России, анализируются основные арменоведческие работы русских авторов. В начале века Восточная Армения была присоединена к России. Естественно, вошедшие в новое русло экономические, политические и культурные связи должны были отразиться в работах русских авторов. Поэтому изучение исторических связей армянского и русского народов, а также истории Армении в целом, в России было обусловлено существенными сдвигами, имевшими место в истории армяно-русских отношений в начале XIX в.

В главе выделены следующие проблемы: древняя Армения в работах русских авторов и изучение истории армяно-русских отношений в оценках русских историков. В этой связи следует особо отметить работы основателя русской арменоведческой школы С.Н. Глинки.

В главе также рассматриваются труды армянских авторов /Е. Хубов, Я. и Д. Арзановы, Ал. Худабашев/, работы которых были опубликованы в России на русском языке. С другой стороны, в арменоведческих изданиях первой половины XIX в. проблемы истории

Армении были охвачены не полностью и не стали предметом глубокого изучения.

Вторая глава - диссертации "Арменоведение в России во втарой половине XIX в." посвящена историко-критическому анализу созданной в России во второй половине XIX в. арменоведческой литературы. Пореформенный период в России ознаменовал собой новый этап развития исторической науки. Заметные сдвиги произошли также в области арменоведения. Появились заслуживающие внимания исследования, посвященные Армении и ее истории. Причем изучение истории Армении привлекло внимание не только русских историков-кавказоведов, но и других представителей русской общественной и историографической мысли. Эти исследования внесли значительный вклад как в целостное изучение истории Армении, так и в научную разработку и изучение ее отдельных проблем. Русские авторы определенно содействовали и формированию общественного мнения и настроений в отношении армянского народа. В результате этих исследований широкие слои русской общественности смогли довольно обстоятельно узнать о судьбе армянского народа, о его богатой истории и освободительной борьбе. Многие из них, кроме научной ценности, имеют также большое познавательное значение.

В главе выделены следующие проблемы; изучение древней и средневековой истории Армении в трудах русских авторов, арменоведческие материалы в исследованиях русских историков, посвященных Кавказу и кавказским войнам /П.Бутков, Н. Дубровин, В. Потто и др./, Западняя Армения и Армянский вопрос в работах русских авторов.

Развитие арменоведения в России во второй половине XIX в. было обусловлено не только работами русских авторов. XIX век оказался плодотворным также для армянских авторов, прошедших русскую историографическую школу /М. Эмин, К. Патканов, Г. Эзов /. Прогресс наблюдается в плане как обогащения тематики, так и научной глубины.

В третьей главе - "Вопросы истории Армении в русской периодической печати XIX в." рассматриваются те публикации в русской периодике, которые характеризуют и обобщают главную тематику арменоведческих материалов: какие именно темы представлены и насколько они освящены в русской периодике. В этом аспекте подробно была изучена русская историческая периодика. Особо выделены те публикации на страницах русской периодики, которые соприкасаются с российской политикой в регионе и проблемами западных армян.

В заключении обобщены основные выводы диссертации.